28
ՄԱՐՏԻ
2023

Luys Լույս®

ԱՄՆ-ՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈԲԲԻՍՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆ-ՀՆԴԿԱՍՏԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԻՐԱՑՎԱԾ ՆԵՐՈՒԺՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

Luys Lnyu®

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 1

1. ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ՇԱՀԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ 2

2. ՀԱՅ-ՀՆԴԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ 19

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 30

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արցախյան 44-օրյա պատերազմը և դրան հետևած իրադարձությունները զգալիորեն փոխել են աշխարհաքաղաքական իրադրությունն ու ուժային հավասարակշռությունը Հարավային Կովկասում: Միաժամանակ ռուս-ուկրաինական հակամարտությունը կտրուկ սրել է լարվածությունը հիմնական աշխարհաքաղաքական բևեռների միջև, ինչը իր արտացոլումն է գտնում նաև մեր տարածաշրջանում: Ակնհայտ է, որ արտաքին քաղաքական և անվտանգային այն գործիքակազմը, որը վերջին տասնամյակներին, մասնավորապես՝ նախքան 44-օրյա պատերազմը, Հայաստանին և Արցախին հնարավորություն էր տալիս համեմատաբար կայուն և խաղաղ զարգացում ապահովել, այլևս կորցրել է իր արդիականությունը և կարիք ունի էական վերանայման: Խոսքը առաջին հերթին արտաքին քաղաքական և անվտանգային օրակարգի այնպիսի դիվերսիֆիկացիայի մասին է, որը մի կողմից՝ չի խաթարի տասնամյակների ընթացքում ձևավորված ամուր և վստահելի համագործակցությունը ավանդական դաշնակիցների հետ, մյուս կողմից՝ հնարավորություն կտա դրանք փոխլրացնել՝ ձևավորելով արդյունավետ համագործակցության ձևաչափեր այլ դերակատարների հետ:

«Լույս» հիմնադրամը իր նախորդ վերլուծություններում քանիցս ընդգծել է փոփոխվող աշխարհակարգի պայմաններում ավելի ճկուն և նախաձեռնողական արտաքին քաղաքականություն վարելու կարևորությունը: Մասնավորապես, մեր հետազոտությունների առանցքում են եղել Չինաստանի, Իրանի և տարածաշրջանում աճող շահեր ու հետաքրքրություններ ունեցող այլ դերակատարների հետ համագործակցությանը վերաբերող հարցեր: Մեծ Մերձավոր Արևելքում և Հարավային Կովկասում վերջին տարիներին հետզհետե ավելի նկատելի է դառնում բնակչությամբ աշխարհի ամենամեծ, իսկ տնտեսությամբ 5-րդ երկրի՝ Հնդկաստանի աճող հետաքրքրությունն ու արտաքին քաղաքական ակտիվությունը:

Ինչպես ամուր պատմական և մշակութային կապերը, այնպես էլ արդի աշխարհաքաղաքական շահերն ու տարածաշրջանային առաջնահերթությունները իրական հնարավորություններ են ստեղծում հայ-հնդկական հարաբերութունները զարգացման նոր մակարդակի բարձրացնելու համար: Սակայն ավելի կարևոր է այն իրողությունը, որ Հնդկաստանի հետ հարաբերությունների խորացումը, ի տարբերություն արտաքին և անվտանգային քաղաքականության դիվերսիֆիկացիայի մի շարք այլ հնարավոր ուղղությունների, ոչ միայն չի հակասում տարածաշրջանում Հայաստանի հիմնական ռազմաքաղաքական

գործընկերների շահերին, այլև կարող է նպաստել վերջիններիս հետ բազմակողմ համագործակցության նոր հարթակների հիմնմանը: Մասնավորապես, Թուրքիա-Ադրբեջան-Պակիստան ռազմաքաղաքական առանցքին և վերջինիս աճող ազդեցությանը դիմակայելու հարցում շահագրգռված են ոչ միայն Հայաստանն ու Հնդկաստանը, այլև տարածաշրջանում մեր երկու բարեկամ երկրները՝ Իրանն ու Ռուսաստանը:

Սույն վերլուծության շրջանակներում փորձել ենք բացահայտել հայ-հնդկական հարաբերությունների զարգացման իրատեսական ներուժը՝ ռազմաքաղաքական և տնտեսական ոլորտներում՝ հաշվի առնելով արդի աշխարհաքաղաքական իրողությունները: Այդ համատեքստում ուսումնասիրել ենք Հնդկաստանի արտաքին քաղաքականության առանձնահատկությունները և մասնավորապես՝ դրանց դրսևորումները հարավկովկասյան տարածաշրջանում: Որոշակիորեն ուսումնասիրել ենք հայ-հնդկական հարաբերությունների վերջին տասնամյակների դինամիկան, 44-օրյա պատերազմից հետո երկկողմ շփումների զարգացման ժամանակագրությունը, ինչպես նաև փորձել ենք ուրվագծել Հայաստան-Հնդկաստան համագործակցության խորացման հեռանկարները:

1. ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ՇԱՀԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Այսօր Հնդկաստանը գլոբալ հավակնություններ ունեցող խոշոր տարածաշրջանային տերություն է, որի շահերն ու արտաքին քաղաքական առաջնահերթությունները տարածվում են վերջինիս անմիջական հարևանությամբ գտնվող տարածաշրջանից՝ Հարավային Ասիայից շատ ավելի հեռու՝ Կենտրոնական Ասիայից մինչև Հարավային Կովկաս, Մերձավոր Արևելքից մինչև Արևելյան Աֆրիկա: Հնդկաստանի արտաքին քաղաքականության առանձնահատկություններն ուսումնասիրելիս պետք է առաջին հերթին նկատի ունենալ մի քանի կարևոր հանգամանք.

- Չինաստանի հետ սառեցված սահմանային հակամարտությունը և մրցակցությունը տարածաշրջանային ազդեցության համար,
- Պակիստանի հետ երկարամյա հակամարտությունը Ջամու և Քաշմիր տարածաշրջանների համար,
- Հնդկաստանի պատմական պայքարը ապագաղութացման համար և դրանով պայմանավորված՝ որոշակի զգուշավորությունը Հավաքական Արևմուտքի, մասնավորապես՝ անգլոսաքսոնական երկրների հանդեպ,

- Դեռ Սառը պատերազմի տարիներին ձևավորված «Չմիացման շարժման» ոչ ֆորմալ առաջնորդի կարգավիճակը, որը Հնդկաստանն այսօր էլ համարում է տարբեր աշխարհաքաղաքական բևեռների միջև արդյունավետ խուսանավելու կարևոր գործոն:

Ինչպես Հարավային Ասիայի, այնպես էլ տարածաշրջանից դուրս գտնվող երկրների հետ հարաբերությունների կառուցման գործընթացում Նյու Դելին միշտ կարևորում է վերոհիշյալ հանգամանքները, հետևաբար Հնդկաստանի արտաքին քաղաքականությունը այս կամ այն կերպ փոխկապակցված է դրանցից բխող իր ռազմավարական շահերի և նպատակների հետ:

Այսօր Հնդկաստանը, թեև հավաքական ներուժով զգալիորեն զիջում է երկու հիմնական աշխարհաքաղաքական բևեռներին՝ Չինաստանին և ԱՄՆ-ին, սակայն շնորհիվ զարգացող տնտեսական, ռազմական ներուժի, մարդկային կապիտալի, դարձել է Հարավային Ասիայի առանցքային տարածաշրջանային տերությունը: Պետությունների հզորության վերաբերյալ միջազգային հայտնի փորձագիտական կենտրոնների կանխատեսումները ցույց են տալիս, որ առաջիկա տասնամյակների ընթացքում համախառն հզորության ցուցանիշով 3-րդ գերտերությունը լինելու է Հնդկաստանը[1]: Ընդ որում, Հնդկաստանի համախառն ներուժի ամրապնդումը տեղի է ունենալու ԱՄՆ դիրքերի թուլացման և ՌԴ դիրքերի լճացման պայմաններում[2]:

Արդեն այսօր Հնդկաստանը հանդիսանում է կարևորագույն համաշխարհային դերակատարներից մեկը, իսկ վերջինիս աճող ազդեցությունը Հարավային Ասիայում և Արևելյան Աֆրիկայում միայն ամրապնդում է Նյու Դելիի դիրքերը: Հնդկաստանը վերջին տարիներին ակտիվորեն առաջ է մղում գերտերության կարգավիճակ ստանալու իր վաղեմի երազանքը, հանդես է գալիս ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բարեփոխման գաղափարի պաշտպանությամբ և վերջինիս մշտական անդամ դառնալու հավակնությամբ: Հնդկաստանը բնակչությամբ աշխարհի ամենամեծ, իսկ ՀՆԱ-ի գնողունակության համարժեքության ցուցանիշով՝ 3-րդ երկիրն է: Նյու Դելին հսկայական ռեսուրս է ծախսում նաև զինված ուժերի արդիականացման և սպառազինությունների համալրման ուղղությամբ: Ըստ Ստոկհոլմի ինստիտուտի տվյալների՝

[1] "Measuring Power, Power Cycles, and the Risk of Great-Power War in the 21st Century", by Jacob L. Heim, Benjamin M. Miller, RAND Corporation, 2020, https://www.rand.org/pubs/research_reports/RR2989.html (այցելվել է 15.03.2023թ.):

[2] Կորոնավիրուսը, աշխարհաքաղաքական վերադասավորումները և Հայաստանը, «Լույս» հիմնադրամ, 06.12.2020թ., https://www.luys.am/img/artpic/small/4e63d0fd7f2d30b2679208-covid-19.pdf (այցելվել է 15.03.2023թ.):

Հնդկաստանը 2021-ին ռազմական ծախսերի ցուցանիշով աշխարհում 3-րդն է եղել՝ զիջելով միայն ԱՄՆ-ին ու Չինաստանին:[3]

Չնայած վերոհիշյալ ցուցանիշներին՝ Նյու Դելին հստակ գիտակցում է, որ ԱՄՆ և ՉԺՀ կարգի գերտերության կարգավիճակ ձեռք բերելու և գլոբալ ազդեցության կենտրոն դառնալու համար դեռ երկարամյա և բարդ ճանապարհ ունի անցնելու, հետևաբար փորձում է հնարավորինս դուրս մնալ աշխարհաքաղաքական սուր հակամարտություններից և գլոբալ մրցակցությունից: Ըստ փորձագիտական գնահատականների՝ Հնդկաստանի համար այս փուլում ավելի կարևոր է լինել Հարավային Ասիայում գլխավոր տարածաշրջանային գերտերությունը, քան գլոբալ մակարդակում լինել ամենաթույլ աշխարհաքաղաքական բևեռը:[4] Ընդ որում, այս քաղաքականությունը լիարժեք համընկնում է չմիացման շարժման գաղափարի և Սառը պատերազմի տարիներին Հնդկաստանի վարած զգուշավոր ու հավասարակշռված արտաքին քաղաքականության տրամաբանությանը[5]:

Հենց այս տրամաբանության շրջանակներում պետք է դիտարկել Հնդկաստանի հարաբերությունները խոշոր աշխարհաքաղաքական բևեռների հետ և վերջինիս դիրքավորումը կարևոր միջազգային հարթակներում: Այսպես, օրինակ՝ ԱՄՆ-ի հետ հարաբերութունները Հնդկաստանը առաջին հերթին կարևորում է սեփական տնտեսության առաջխաղացման, ԱՄՆ հսկայական սպառման շուկայում Չինաստանի համար լուրջ մրցակից դառնալու, իսկ երկարաժամկետ հեռանկարում վերջինիս տեղը զբաղեցնելու տեսանկյունից: Չնայած Հնդկաստանի «հակաիմպերիալիստական անցյալին» և «անգլոսաքսոնական աշխարհի» նկատմամբ պատմական անվստահությանը՝ ԱՄՆ-ՉԺՀ աշխարհաքաղաքական մրցավազքում Նյու Դելին ավելի անմիջական սպառնալիք է դիտարկում Եվրասիայում Չինաստանի դիրքերի չափից ավելի հզորացումը, քան ԱՄՆ գլոբալ գերակայությունը: Միաժամանակ, Հնդկաստանի արտաքին քաղաքականությունը միտված է սեփական տնտեսության համար հնարավորինս նպաստավոր պայմանների ապահովմանը, հնդկական ապրանքների և

[3] "World military expenditure passes $2 trillion for first time", SIPRI, 25 April 2022, https://www.sipri.org/media/press-release/2022/world-military-expenditure-passes-2-trillion-first-time#:~:text=India's%20military%20spending%20of,33%20per%20cent%20from%202012 (այցելվել է 15.03.2023թ.):

[4] "India's Middle East Strategy", Transcript by Jon B. Alterman and C. Raja Mohan, December 13, 2022, CSIS, https://www.csis.org/analysis/indias-middle-east-strategy (այցելվել է 15.03.2023թ.):

[5] "India Upholds the Rules-Based Liberal International Order—But in Its Own Way", by Derek Grossman,
December 9, 2022, https://www.rand.org/blog/2022/12/india-upholds-the-rules-based-liberal-international.html (այցելվել է 15.03.2023թ.):

ծառայությունների համար սպառման շուկաների բազմազանեցմանը և ներմուծվող էներգակիրների ցանցի բազմազանեցմանը:

Պատահական չէ, որ Հնդկաստանը միաժամանակ պահպանում է ակտիվ երկխոսությունը ԱՄՆ-ի, ԵՄ երկրների հետ, բայց նաև կարևորում է իր մասնակցությունը այնպիսի հարթակներում, ինչպիսիք են ԲՐԻԿՍ-ը, Շանհայի համագործակցության կազմակերպությունը և այլն: Ուշագրավ է Նյու Դելիի մասնակցությունը I2U2 (ԱՄՆ, ԱՄԷ, Իսրայել, Հնդկաստան), QUAD (Քառակողմ անվտանգային երկխոսություն՝ Ավստրալիա, Հնդկաստան, Ճապոնիա, ԱՄՆ) հարթակներին[6]: Օրինակ, ԲՐԻԿՍ-ի շրջանակներում Նյու Դելին մի կողմից՝ փորձում է ընդգծել գերտերության իր կարգավիճակը՝ հանդես գալով ՄԱԿ-ի ԱԽ մշտական անդամներ ՌԴ և ՉԺՀ-ի հետ համարժեք դիրքերում, մյուս կողմից՝ ակտիվորեն առաջ է մղում բազմաբևեռ աշխարհակարգի ձևավորման իր տեսլականը: Շանհայի համագործակցության կազմակերպության շրջանակներում Հնդկաստանի գերնպատակներից է նախ ակտիվ մասնակցությամբ զսպել ու հավասարակշռել Չինաստանի աճող ազդեցությունը Եվրասիայում՝ առաջին հերթին Կենտրոնական Ասիայում, Պակիստանում և Աֆղանստանում, մյուս կողմից՝ չմնալ տարածաշրջանում ՌԴ-Չինաստան խորացող համագործակցության ստվերում:

Ընդ որում, եթե Չինաստանը Հնդկաստանի կողմից ընկալվում է որպես ռազմավարական և երկարաժամկետ սպառնալիք, և չնայած պարբերաբար տեղի ունեցող սահմանային ընդհարումներին, այս երկու տերությունների միջև լայնամասշտաբ պատերազմը քիչ հավանական է, ապա այլ է Հնդկաստանի ընկալումը Պակիստանի հարցում, որը Նյու Դելին համարում է իր անվտանգության համար ուղղակի և առաջնային սպառնալիք: Առավել ևս Հնդկաստանի համար անընդունելի է Պակիստանում Չինաստանի ազդեցության չափազանց ամրապնդումը, քանի որ վերջինս, օգտվելով հզոր հարևանի հովանավորչությունից, կարող է ոչ միայն ուղղակի սպառնալ Հնդկաստանի անվտանգությանը, այլև հանդես գալ որպես ապագայում Հնդկաստանի և Չինաստանի միջև հիբրիդային պատերազմների հիմնական պլացդարմ:

Հնդկաստանի արտաքին քաղաքական վերոհիշյալ առանձնահատկություններով է նաև պայմանավորված վերջին տարիներին Նյու Դելիի նկատելի ակտիվությունը ինչպես առհասարակ Եվրասիայում, այնպես էլ Մերձավոր Արևելքում և Հարավային Կովկասում: Այնտեղ, որտեղ առկա է Չինաստանի և Պակիստանի ազդեցության մեծացման ռիսկ, Հնդկաստանը

[6] "India's Middle East Strategy", Transcript by Jon B. Alterman and C. Raja Mohan, December 13, 2022, CSIS, https://www.csis.org/analysis/indias-middle-east-strategy (այցելվել է 15.03.2023թ.):

փորձելու է կամ հակակշռել այդ ազդեցությունը, կամ սեփական մասնակցությամբ առնվազն դուրս չմնալ հիմնական գործընթացներից:

Չնայած Հնդկաստանի այս քաղաքականությունը ավելի մեծ տարածաշրջանային ենթատեքստ ունի և ընդգրկում է ողջ Մեծ Մերձավոր Արևելքը, սակայն այն իր որոշակի դրսևորումն ունի նաև կոնկրետ Հարավային Կովկասի տարածաշրջանում: Ընդ որում, մեր տարածաշրջանում Հնդկաստանի արտաքին քաղաքականության առանձնահատկությունները դիտարկելիս պետք է հաշվի առնել վերջին տարիներին նկատելիորեն ընդգծվող հետևյալ երկու աշխարհաքաղաքական գործընթացները, որոնք ուղղակիորեն շոշափում են Հնդկաստանի շահերը.

- Չինաստանի «Գոտի և ճանապարհ» նախագծի ընդլայնումը և տարածումը Հարավային Կովկասում ու հարակից երկրներում: Մասնավորապես, տարածաշրջանի երկրներում ՉԺՀ տնտեսական ներգրավվածության աննախադեպ աճը:
- Թուրքիա-Ադրբեջան-Պակիստան ռազմաքաղաքական առանցքի ձևավորումը և Կենտրոնական Ասիայում պանթուրանական կամ պանիսլամական գաղափարների տարածումը:

Օրինակ, չնայած Հնդկաստանը պաշտոնապես չի բոյկոտում Չինաստանի «Գոտի և ճանապարհ» ծրագիրը, սակայն դրա որոշ բաղադրիչներ դիտարկում է որպես անմիջական սպառնալիք՝ ուղղված Հնդկաստանի տարածքային ամբողջականության և ինքնիշխանության դեմ: Խոսքն առաջին հերթին ծրագրի շրջանակներում ձևավորվող այն ենթակառուցվածքների մասին է, որոնք անցնում են Պակիստանի վերահսկողության տակ գտնվող վիճելի տարածքներով[7]: Ավելին, չինական նախագիծը հակակշռելու նպատակով Հնդկաստանը վերջին տարիներին սկսել է ավելի մեծ հետաքրքրություն ցուցաբերել դեռևս 2000-ականների սկզբին նախաձեռնված Հյուսիս-Հարավ ծրագրի նկատմամբ, որը նախատեսում է Հնդկաստանը ամենակարճ ճանապարհով կապել Ռուսաստանի և Եվրոպայի հետ[8]: Նաև հենց այստեղ են Հնդկաստանի շահերը համընկնում Հարավային

[7] "India's Latest Concerns With the China-Pakistan Economic Corridor", By Rajeswari Pillai Rajagopalan, The Diplomat, August 09, 2022, https://thediplomat.com/2022/08/indias-latest-concerns-with-the-china-pakistan-economic-corridor/ (այցելվել է 15.03.2023թ.):

[8] "Международный транспортный коридор «Север — Юг» и сценарии трансрегиональной интеграции", Александр Караваев, Мандана Тишехьяр, Доклад Международного дискуссионногоклуба «Валдай», Июнь 2019, https://ru.valdaiclub.com/files/27685/ (այցելվել է 15.03.2023թ.), Международный транспортный коридор «Север – Юг»: инвестиционные решения и мягкая инфраструктура, Евразийский банк развития, 26 октября 2022, https://eabr.org/analytics/special-reports/mezhdunarodnyy-transportnyy-koridor-sever-yug-investitsionnye-resheniya-i-myagkaya-infrastruktura/ (այցելվել է 15.03.2023թ.):,

Կովկասում երկու առանցքային դերակատարներ և Հայաստանի ռազմավարական գործընկերներ Իրանի և Ռուսաստանի տարածաշրջանային շահերի հետ, իսկ Հայաստանը, օբյեկտիվորեն դուրս մնալով Արևելք-Արևմուտք միջտարածաշրջանային կոմունիկացիոն գրեթե բոլոր նախագծերից, Հյուսիս-Հարավ նախագիծը կարող է դիտարկել որպես տարածաշրջանային մեկուսացումից դուրս գալու միակ և ամենաիրատեսական փրկօղակ:

Ինչ վերաբերում է Թուրքիա-Ադրբեջան-Պակիստան ձևավորվող ռազմաքաղաքական առանցքին, ապա այս գործընթացը անմիջականորեն փոխկապակցված է Հնդկաստանի կենսական անվտանգային շահերի հետ: Նախ, առհասարակ վերջին տարիներին Հնդկաստանի ավելի մեծ ուշադրությունը Մերձավոր Արևելքում տեղի ունեցող գործընթացների նկատմամբ պայմանավորված է ինչպես էներգետիկայի ոլորտում զարգացող համագործակցությամբ, այնպես էլ Հնդկաստանում մեծաքանակ մահմեդական բնակչության առկայությամբ: Հնդկաստանում բնակչության շուրջ 30%-ը (ավելի քան 400 մլն-ը) մահմեդական է. Մերձավոր Արևելքը գտնվում է Հնդկաստանի անմիջական հարևանությամբ, և այնտեղ ցանկացած արմատական պանիսլամական կամ ազգայնական գաղափարախոսության տարածում կարող է շղթայական տարածում գտնել Կենտրոնական և Հարավային Ասիայում, ինչպես նաև բուն Հնդկաստանում[9]: Թուրքիա-Ադրբեջան-Պակիստան ռազմաքաղաքական տանդեմը սպառնում է ոչ միայն կամուրջ դառնալ՝ արմատական պանիսլամական ու պանթյուրքական գաղափարները, տարատեսակ ծայրահեղական տարրերին և ահաբեկչական խմբավորումներին Մերձավոր Արևելքից դեպի Կենտրոնական և Հարավային Ասիա տեղափոխելու համար, այլև արդեն իսկ ունի ընդգծված ռազմական բաղադրիչ՝ ի դեմս եռակողմ զորավարժությունների և սպառազինության ոլորտում համագործակցության:

Հաշվի առնելով վերոհիշյալ իրողությունները՝ փորձենք առավել մանրամասն անդրադառնալ Հարավային Կովկասում երեք առանցքային դերակատարների՝ Ռուսաստանի, Իրանի և Թուրքիայի (ներառյալ վերջինիս կցորդ Ադրբեջանի) հետ Հնդկաստանի հարաբերությունների առանձնահատկություններին:

Իրան

Թեև Հնդկաստանն ու Իրանը չունեն ընդհանուր ցամաքային սահման և այս երկու պատմական հարևանների միջև այսօր գտնվում է Պակիստանը, սակայն Նյու Դելին Իրանը դիտարկում է որպես կամուրջ Մերձավոր Արևելքի և Կենտրոնական

[9] "India's Middle East Strategy", Transcript by Jon B. Alterman and C. Raja Mohan, December 13, 2022, CSIS, https://www.csis.org/analysis/indias-middle-east-strategy (այցելվել է 15.03.2023թ.):

Ասիայի հետ առևտրատնտեսական և ռազմաքաղաքական կապերի ամրապնդման համար: Դեռևս 2000-ականներից Հնդկաստանը Իրանի և Ռուսաստանի հետ ակտիվորեն առաջ է մղում Հյուսիս-Հարավ նախագիծը, որը պետք է Իրանի հարավ-արևելքում գտնվող Չաբահար նավահանգստի միջոցով Հնդկաստանի համար տրանսպորտային միջանցք ապահովի ինչպես դեպի Աֆղանստան և Կենտրոնական Ասիա, այնպես էլ դեպի Կովկաս, Ռուսաստան և Եվրոպա: Հնդկաստանը էական ներդրումներ է կատարել Իրանի տրանսպորտային ենթակառուցվածքներում, թեև հարկ է նշել, որ Թեհրանը այս ուղղությամբ սերտորեն համագործակցում է նաև Չինաստանի հետ:

Միաժամանակ, Իրանը Հնդկաստանի համար կարևոր գործընկեր է էներգետիկ ոլորտում, երկու երկրներն ունեն հիմնականում փոխլրացնող տնտեսական կառուցվածքներ, համատեղ շահագրգռվածություն ունեն Աֆղանստանի կայունացման և Կենտրոնական Ասիայի հետ կապերի ամրապնդման հարցում: Երկու երկրները, որոնց ռազմարդյունաբերական համակարգերի հիմքում հիմնականում ռուսական և խորհրդային սպառազինությունն է, ոլորտում համագործակցության երկարամյա փորձ ունեն, միաժամանակ չեն խորշում համատեղ զորավարժություններից[10]: Նյու Դելին հատկապես կարևորում է Իրանի դերակատարությունը Պակիստանի հետ հնարավոր պատերազմի ժամանակ[11]: Նույնիսկ կան պաշտոնապես չհաստատված փորձագիտական գնահատականներ առ այն, որ Իրանը պատրաստ է իր տարածքում Հնդկաստանին ռազմական հենակետ տրամադրել, Պակիստանի հետ հնարավոր պատերազմի պարագայում[12]:

Այժմ Իրանը Հնդկաստանի համար հանդիսանում է նավթի ներմուծման կարևոր ուղղություններից մեկը: Այս երկրները մեծ ներուժ ունեն նաև բնական գազի ոլորտում համագործակցության հարցում՝ հաշվի առնելով Իրանի հարուստ ռեսուրսներն ու Հնդկաստանում բնական գազի նկատմամբ աճող պահանջարկը.

---

[10] "INDIA-IRAN RELATIONS: ASSESSING PROSPECTS AND CHALLENGES", Nadeem Ahmed Moonakal, Rasanah: International Institute for Iranian Studies, April 2020 https://rasanah-iiis.org/english/wp-content/uploads/sites/2/2020/09/India-Iran-Relations-Assessing-Prospects-and-Challenges.pdf (այցելվել է 15.03.2023թ.):

[11] "The "Strategic Partnership" Between India and Iran", Robert M. Hathaway, the Woodrow Wilson Center's Asia Program, April 2004, https://www.wilsoncenter.org/sites/default/files/media/documents/publication/asia_rpt_120rev.pdf (այցելվել է 15.03.2023թ.):

[12] "Iran-India Relations with Future Prospects", Golamreza Nasirpour - Faculty member of AJA University of Command and Staff, Tahran, Iran, SCOPUS, Geopolitics Quarterly, Volume: 14, No 4, Winter 2019
PP 165-187 http://journal.iag.ir/article_82987_407869b53de9a1ed2666878d9efce7c0.pdf (այցելվել է 15.03.2023թ.):

Հնդկաստանը բնական գազի խոշոր համաշխարհային սպառողներից է, որտեղ պահանջարկը տարեկան աճում է մոտ 8%-ով: Ուշագրավ է, որ դեռ 90-ականներից երկու երկրները բանակցում էին Պակիստանի տարածքով գազատարի անցկացման նախագծի շուրջ, որը այդպես էլ կյանքի չկոչվեց: Այսօր էլ երկու երկրները քննարկում են դեպի Օման և Հնդկաստան ստորջրյա գազատարի կառուցման հարցը[13]: Հայտնի է, որ Հնդկաստանում սպառվող նավթի 90%-ը ներմուծվում է արտերկրից, իսկ նախքան Իրանի նկատմամբ ամերիկյան պատժամիջոցների կիրառումը Թեհրանը ապահովում էր Հնդկաստանին ներմուծվող նավթի մոտ 10%-ը[14]: Այսինքն՝ էներգետիկ ոլորտում երկու երկրների համագործակցությունը ոչ միայն կայացած, այլ նաև հեռանկարային է:

Միևնույն ժամանակ, Նյու Դելին հիմնականում շիա մահմեդական բնակչություն ունեցող Իրանին դիտարկում է նաև որպես կարևոր բուֆեր՝ մի կողմից՝ Մերձավոր Արևելքի սուննի իսլամական շրջանակներում տարածված ծայրահեղական գաղափարների արտահոսքը դեպի Կենտրոնական Ասիա և բուն Հնդկաստան արգելակելու, մյուս կողմից՝ Թուրքիայի կողմից ակտիվորեն խրախուսվող պանթյուրքական ծրագրերը զսպելու տեսանկյունից: Իրանն իր հերթին Հնդկաստանի հետ բազմոլորտ համագործակցության խորացումը դիտարկում է որպես ևս մեկ փրկօղակ՝ արևմտյան պատժամիջոցների բացասական հետևանքները հաղթահարելու համար և ի դեմս Հնդկաստանի՝ Արևելքում ևս մեկ գերտերության հետ արդյունավետ փոխգործակցության ձևավորման ուղղություն, ինչը վերջինիս հնարավորություն է տալիս խուսափել միջազգային մեկուսացումից:

Եթե Իրանի և Չինաստանի միջև ռազմավարական համագործակցությունը ունի ամուր և երկարաժամկետ պայմանագրային հիմքեր՝ ի դեմս 2021թ. մարտին ստորագրված ռազմավարական համագործակցության «25-ամյա համաձայնագրի»[15], ապա ըստ փորձագիտական գնահատականների՝ Թեհրանը ձգտում է նմանատիպ դաշնագիր կնքել նաև Հնդկաստանի հետ, ինչը թույլ կտա հավասարակշռել հարաբերությունները Արևելքի երկու առանցքային գերտերությունների հետ: Դրանով Իրանը հույս ունի նաև մեծացնել սեփական

[13] "Iran-India Relations with Future Prospects", Golamreza Nasirpour - Faculty member of AJA University of Command and Staff, Tahran, Iran, SCOPUS, Geopolitics Quarterly, Volume: 14, No 4, Winter 2019
PP 165-187 http://journal.iag.ir/article_82987_407869b53de9a1ed2666878d9efce7c0.pdf (այցելվել է 15.03.2023թ.):

[14] "India's Middle East Strategy", Transcript by Jon B. Alterman and C. Raja Mohan, December 13, 2022, CSIS, https://www.csis.org/analysis/indias-middle-east-strategy (այցելվել է 15.03.2023թ.):

[15] Իրան-Չինաստան ռազմավարական համագործակցության ներկան և ապագան, «Լույս» հիմնադրամ, 30 թ10.2021 https://www.luys.am/img/artpic/small/33b43d5e90c8d00698b308-Iran-China.pdf (այցելվել է 15.03.2023թ.):

տնտեսության մեջ Հնդկաստանի ու հնդկական բիզնեսի ներդրումների ծավալը և ավելի նպաստավոր պայմաններ ստեղծել էներգետիկ ոլորտում համագործակցության համար[16]:

Իհարկե, Իրան-Հնդկաստան հարաբերություններն ունեն նաև որոշակի սահմանափակումներ, որոնց շարքում կարելի է ընդգծել ԱՄՆ-ի հետ առևտրատնտեսական և ռազմաքաղաքական համագործակցության կարևորությունը Նյու Դելիի համար, սպառազինությունների ոլորտում վերջին տարիներին նկատելիորեն զարգացող փոխգործակցությունը Իսրայելի հետ, Հնդկաստանի էներգետիկ շահերը Սաուդյան Արաբիայում և այլն: Իրանն իր հերթին պատրաստ չէ անվերապահորեն աջակցել Նյու Դելիին Հնդկաստան-Չինաստան կամ Հնդկաստան-Պակիստան հակամարտություններում: Սակայն այս խոչընդոտող հանգամանքները էական ազդեցություն չունեն հարաբերությունների երկարաժամկետ զարգացման անհրաժեշտության վերաբերյալ երկու երկրների ռազմավարական տեսլականի վրա, ինչը պայմանավորված է տարածաշրջանային և գլոբալ մի շարք խնդիրների և մարտահրավերների մասով երկու երկրների կենսական շահերի համընկնմամբ:

Ռուսաստան

Ինչպես արդեն նշվեց, Հնդկաստանը բավական ջերմ հարաբերություններ էր հաստատել Ռուսաստանի հետ դեռևս Սառը պատերազմի տարիներին: Երկու երկրների միջև համագործակցությունը՝ ռազմաքաղաքական հարթությունից մինչև առևտուր և մշակույթ, հատկապես շեշտակի զարգացում ապրեց մի կողմից՝ ԱՄՆ կողմից Պակիստանին տրամադրվող աջակցության, մյուս կողմից՝ ռուս-չինական լարվածության աճի համատեքստում: Հնդկաստանի բանակաշինության և սպառազինության հիմքերում հենց խորհրդային ռազմարդյունաբերությունն է, ինչը Նյու Դելիի համար չափազանց կարևոր էր՝ Պակիստանի հետ հակամարտության պայմաններում: Նույնիսկ ԽՍՀՄ փլուզումից հետո Ռուսաստանը շարունակում է մնալ Հնդկաստանի ԶՈՒ-ի սպառազինության հիմնական աղբյուրը:

Այսօր Հնդկաստանի զինված ուժերի սպառազինության շուրջ 85%-ը խորհրդային ծագում ունի, ինչը առաջացնում է Ռուսաստանից երկարաժամկետ կախվածություն՝ այդ սպառազինության պահեստամասերի թարմացման, դրանց արդիականացման, համադրման և այլ հարցերում: Օրինակ, Հնդկաստանի զրահատեխնիկայի ճնշող մեծամասնությունը բաղկացած է խորհրդային

[16] "Iran offers China-style strategic deal for India", Shashank Mattoo, 19.12.2022, https://www.livemint.com/news/india/iran-offers-china-style-strategic-deal-for-india-11671381480204.html (այցելվել է 15.03.2023թ.):

(ռուսական) T-72 և T-90S տանկերից, ռազմաօդային ուժերում գերակշռում են ՄիԳ-21, ՄիԳ-29, Սու-30 մոդելները, նման իրավիճակ է նաև ռազմածովային ուժերում: Նույնիսկ 2014-ին Ուկրաինայում ստեղծված ճգնաժամից և ՌԴ նկատմամբ արևմտյան պատժամիջոցների կիրառումից հետո Հնդկաստանը շարունակում է սպառազինության ձեռքբերումը ՌԴ-ից, այդ թվում՝ 2016թ. վերջինիս հետ կնքելով ավելի քան 5 մլրդ դոլարի համաձայնագիր S-400 ՀՕՊ համակարգերի ձեռքբերման վերաբերյալ[17]: Չնայած դրան, Հնդկաստանը նաև փորձում է դիվերսիֆիկացնել սպառազինության ներմուծման ուղիները և վերջին տարիներին նկատելի է ռուսական սպառազինությունից հսկայական կախվածության որոշակի թուլացում:



[18]

Արևմուտքի դեմ Հնդկաստանի «հակաիմպերիալիստական» պայքարը, վերջինիս գլխավորած չմիացման շարժումը մեծ հաշվով դրական ընկալում ուներ դեռ ԽՍՀՄ կողմից: Երկու երկրների միջև պատմականորեն ձևավորված ջերմ

[17] "Russia and India: A New Chapter", Rajan Menon, Eugene Rumer, Carnegie Endowment for International Peace, Paper, September 20, 2022 https://carnegieendowment.org/2022/09/20/russia-and-india-new-chapter-pub-87958 (այցելվել է 15.03.2023թ.):

[18] "Russia and India: A New Chapter", Rajan Menon, Eugene Rumer, Carnegie Endowment for International Peace, Paper, September 20, 2022 https://carnegieendowment.org/2022/09/20/russia-and-india-new-chapter-pub-87958 (այցելվել է 15.03.2023թ.):

հարաբերությունները պահպանվում են նաև այսօր. Հնդկաստանն ու Ռուսաստանը սերտորեն համագործակցում են ինչպես երկկողմ ձևաչափով, այնպես էլ տարբեր միջազգային հարթակներում: Արդեն նշվեց այս երկու երկրների առանցքային դերակատարությունը այնպիսի հարթակներում, ինչպիսիք են ԲՐԻԿՍ-ը, Շանհայի համագործակցության կազմակերպությունը և այլն: Հնդկաստանը մեծ հետաքրքրություն է ցուցաբերում ԵԱՏՄ հետ փոխգործակցության զարգացման հարցում և ձգտում է վերջինիս հետ ազատ առևտրի մասին համաձայնագիր կնքել: Մոսկվան և Նյու Դելին հանդես են գալիս բազմաբևեռ աշխարհակարգի ձևավորման գաղափարի ակտիվ պաշտպանությամբ և մեծ հաշվով երկուսին էլ չի գոհացնում ինչպես ԱՄՆ գերակայությունը, այնպես էլ հնարավոր նոր Սառը պատերազմը ԱՄՆ-ի և Չինաստանի միջև:

Երկու երկրները պարբերաբար համատեղ զորավարժություններ են անցկացնում, այդ թվում՝ Չինաստանի և տարածաշրջանի այլ երկրների մասնակցությամբ.ընդ որում, նույնիսկ Ուկրաինայում տեղի ունեցող ակտիվ ռազմական գործողությունների պայմաններում Նյու Դելին չի խորշում մասնակցել Ռուսաստանում անցկացվող զորավարժություններին (վերջին անգամ՝ 2022թ. սեպտեմբերին)[19], ինչը շատ խոսուն է Հնդկաստանի արտաքին քաղաքական առաջնահերթությունները հասկանալու տեսանկյունից: Նյու Դելին և Մոսկվան հանդիսանում են Հյուսիս-Հարավ նախագծի նախաձեռնողներն ու առանցքային մասնակիցները և համադրելի շահեր ունեն ինչպես Կենտրոնական Ասիայում, այնպես էլ Մերձավոր Արևելքում: Վերջապես, երկու երկրներն էլ վերջին տարիներին զգալիորեն ակտիվացրել են փոխգործակցությունը Իրանի հետ տարբեր ոլորտներում, ինչը ավելի նշմարելի է դարձնում Ռուսաստան-Իրան-Հնդկաստան ռազմավարական առանցքը՝ ի հակակշիռ Թուրքիա-Ադրբեջան-Պակիստան դաշինքի, որը այս կամ այն չափով որպես սպառնալիք է ընկալվում բոլոր երեք երկրների համար:

Ներկայիս աշխարհաքաղաքական լարվածության պայմաններում Հնդկաստանը բավական զգուշավոր քաղաքականություն է որդեգրել ռուս-ուկրաինական հակամարտության հարցում: Մի կողմից՝ Նյու Դելին ձեռնպահ է մնում հակառուսական քվեարկությունների ժամանակ, լինեն դրանք ՄԱԿ-ում, թե այլ միջազգային կառույցներում, մյուս կողմից՝ հանդես է գալիս ռազմական գործողությունների դադարեցման և բանակցությունների միջոցով հակամարտության կարգավորման օգտին: Նույնիսկ ակնհայտ արևմտյան ուղղվածություն ունեցող հարթակներում, ինչպիսին, օրինակ, QUAD-ն (Քառակողմ

[19] "Vostok-22: Challenges of Diplomatic Promiscuity", HARSH V. PANT, SEP 04 2022, https://www.orfonline.org/research/vostok-22-challenges-of-diplomatic-promiscuity/ (այցելվել է 15.03.2023թ.):

անվտանգային երկխոսություն) է, Հնդկաստանն ամեն կերպ խուսափում է Մոսկվային հիշատակելուց: Ինչպես Չինաստանը, այնպես էլ Հնդկաստանը ոչ միայն չի միացել ՌԴ դեմ արևմտյան տնտեսական պատժամիջոցներին, այլև շեշտակիորեն ավելացրել է Ռուսաստանից էներգակիրների և այլ ռեսուրսների ներմուծման ծավալները, որոշ չափով փոխհատուցելով Եվրոպական շուկայից դուրս գալու արդյունքում ՌԴ տնտեսական կորուստները, հետևաբար մեղմելով արևմտյան պատժամիջոցների հետևանքները[20]:

Չնայած ռազմաքաղաքական հարաբերությունների բավական բարձր մակարդակին՝ Հնդկաստանի և Ռուսաստանի միջև առևտրատնտեսական հարաբերությունները վերջին տասնամյակներին զարգացման նույնքան լուրջ դինամիկա չեն ցուցաբերել: 2014-2019 թվականներին երկու երկրների միջև առևտրի միջին տարեկան շրջանառությունը կազմել է շուրջ 10 մլրդ դոլար: Սակայն դեռ ռուս-ուկրաինական ճգնաժամից առաջ՝ 2021-ին ՌԴ և Հնդկաստանի միջև առևտրի շրջանառությունը նկատելի աճ գրանցեց՝ կազմելով ավելի քան 13,5 մլրդ դոլար, իսկ Ուկրաինայում ռազմական գործողությունների մեկնարկից հետո այն թռիչքային աճ ապահովեց՝ շնորհիվ ռուսական նավթի ներմուծման ծավալների բազմապատկման: Արդեն 2022-ի 11 ամիսների տվյալներով ՌԴ-Հնդկաստան առևտրի շրջանառությունը կազմել է ավելի քան 35 մլրդ եվրո՝ հատելով երկու երկրների նախագահների կողմից սահմանված նշաձողը՝ մինչև 2025-ը առևտրի ծավալները 30 մլրդ դոլարի հասցնելու վերաբերյալ[21]: Ինչպես արդեն նշվեց, այս թռիչքային աճը տեղի է ունեցել շնորհիվ ռուսական նավթի ներմուծման ծավալների բազմապատկման, որի արդյունքում նախորդ տարի Ռուսաստանը պարբերաբար շրջանցում էր Հնդկաստանի նավթի շուկայում առաջատար դիրքեր զբաղեցնող Սաուդյան Արաբիային և Իրաքին[22]:

Հատկանշական է, որ վերջին տարիներին ռուսական փորձագիտական շրջանակներից ավելի հաճախ է հնչում տեսակետ առ այն, որ փոփոխվող աշխարհակարգի և ԱՄՆ-ՉԺՀ միջև նոր Սառը պատերազմի անխուսափելիության պայմաններում Մոսկվա-Նյու Դելի առանցքը կարող է դառնալ «Նոր չմիացման շարժման» կամ այսպես կոչվող «Խաղաղ զարգացման շարժման» հիմնական

[20] "India Upholds the Rules-Based Liberal International Order—But in Its Own Way", by Derek Grossman,
December 9, 2022, https://www.rand.org/blog/2022/12/india-upholds-the-rules-based-liberal-international.html (այցելվել է 15.03.2023թ.):
[21] "Посол РФ заявил о динамичном развитии торговли России и Индии", НЬЮ-ДЕЛИ, ТАСС, 13 февраля 2023г. https://tass.ru/ekonomika/17036351 (այցելվել է 15.03.2023թ.):
[22] "Развитие российско-индийских экономических связей в новых условиях", Лидия Кулик, Алексей Калинин, Российский совет по международным делам, 9 января 2023
https://russiancouncil.ru/activity/policybriefs/razvitie-rossiysko-indiyskikh-ekonomicheskikh-svyazey-v-novykh-usloviyakh/ (այցելվել է 15.03.2023թ.):

շարժիչ ուժը՝ ներառելով բոլոր այն երկրները, որոնք չեն ցանկանա ներքաշվել Չինաստանի և ԱՄՆ-ի առևտրային պատերազմների և սպառազինության մրցավազքի մեջ[23]:

Թեև ՌԴ-ԱՄՆ սուր հակամարտության պայմաններում նման սցենարը այս պահին այնքան էլ նշմարելի չէ, սակայն երկարաժամկետ հեռանկարում այն հնարավոր չէ բացառել՝ հաշվի առնելով աշխարհաքաղաքական գործընթացների հիմնական ուղղություններն ու դրանց զարգացման միտումները: Ընդհանուր առմամբ, այսօր աշխարհում դժվար է առանձնացնել ՌԴ-ի և Հնդկաստանի նման երկու այլ գերտերություններ, որոնք համատեղ ներուժով ի վիճակի լինեն հանդես գալ որպես ինքնուրույն դերակատարներ՝ Արևմուտք-Չինաստան աշխարհաքաղաքական հակամարտության պայմաններում:

Թուրքիա-Ադրբեջան

Եթե ի դեմս Իրանի և Ռուսաստանի՝ մենք ներկայացրինք տարածաշրջանի այն երկրները, որոնց շահերը հիմնական աշխարհաքաղաքական և տարածաշրջանային հարցերի մասով համընկնում է Նյու Դելիի շահերին, ապա Թուրքիան և Ադրբեջանը այս տեսանկյունից լրիվ հակառակ դերակատարություն ունեն: Այս երկուսը ակտիվորեն զարգացնում են ռազմավարական փոխգործակցությունը Պակիստանի հետ, այդ թվում՝ ռազմական ոլորտում, Ջամուի և Քաշմիրի հարցում բոլոր միջազգային հարթակներում հանդես են գալիս Պակիստանի շահերի պաշտպանությամբ և իրենց դեստրուկտիվ գործողություններով նպաստում են ծայրահեղական գաղափարների և ահաբեկչական խմբավորումների տարածմանը Մերձավոր Արևելքից դեպի Կենտրոնական Ասիա:

Թուրքիան, ունենալով զարգացած ռազմարդյունաբերական համակարգ, վերջին տարիներին նկատելիորեն ակտիվացրել է համագործակցությունը Պակիստանի հետ սպառազինությունների ոլորտում: Արցախյան 44-օրյա պատերազմի ժամանակ թուրքական ԱԹՍ-ների լայն կիրառումը և դրանց նկատմամբ միջազգային աղմուկը չի շրջանցել նաև Պակիստանի հետաքրքրությունը, որը սկսել է Թուրքիայից մեծ ծավալով ԱԹՍ-ներ գնել և դրանք ինտեգրել սեփական ՀՈՒ-ում[24]: Թուրքիայի կողմից Պակիստանի սպառազինումը,

[23] “Евразийская хорда, океанское кольцо Россия и Индия как третья сила нового миропорядка”, Алексей Куприянов, Александр Королёв, Доклад Международного дискуссионного клуба «Валдай», Сентябрь 2019, https://ru.valdaiclub.com/files/29200/ (այցելվել է 15.03.2023թ.):

[24] “1st Customer Of ‘Super Bayraktar’ UAVs, Pakistan Completes Training On Turkish ‘Cutting Edge’ Akinci Drones”, By Sakshi Tiwari, October 28, 2022 https://eurasiantimes.com/1st-customer-of-super-bayraktar-uavs-pakistan-completes-training/ (այցելվել է 15.03.2023թ.), “Pakistan integrating TB2 into air-defence network”,

իհարկե, ուղղված է Հնդկաստանի դեմ, և Նյու Դելին չի կարող այն անուշադրության մատնել[25]: Պակիստանն իր հերթին անվերապահորեն աջակցել է թուրք-ադրբեջանական ագրեսիային Արցախի դեմ, իսկ հնդկական և միջազգային մամուլում պատերազմի օրերին նույնիսկ տեղեկատվություն տարածվեց Արցախում պակիստանցի զինվորականների ներգրավման մասին[26]: Պատերազմից հետո Իսլամաբադը պարբերաբար շնորհավորանքներ էր շռայլում՝ ուղղված Ադրբեջանին և իր աջակցությունը հայտնում այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքի» հետ կապված Ադրբեջանի նկրտումներին:

Այն փաստը, որ Թուրքիան և Ադրբեջանը արցախյան վերջին պատերազմում ներգրավել էին Մերձավոր Արևելքից տարատեսակ ահաբեկչական խմբավորումների, Հնդկաստանի համար առանձնահատուկ մտահոգության առարկա է: Հաշվի առնելով ռազմական ոլորտում երեք երկրների ընդլայնվող համագործակցությունը, չի կարելի բացառել, որ նույն եղանակով Պակիստան-Հնդկաստան լարվածության պարագայում Անկարան ու Բաքուն նմանատիպ խմբավորումներ կմատակարարեն Պակիստանին՝ դրանց ներգրավելով Հնդկաստանի դեմ հնարավոր ռազմական գործողություններին: Միաժամանակ, Ադրբեջանը, հանդիսանալով «Զմիացման շարժման» ակտիվ մասնակիցներից մեկը, վերջին տարիներին որոշակի ազդեցություն և հեղինակություն է կուտակել շարժման որոշ անդամների նկատմամբ, ինչը կարող է շահագործել շարժման ներսում Պակիստանի և Թուրքիայի շահերի սպասարկման նպատակով:

Պետք է նշել, որ Հնդկաստանը նաև արդյունավետ համագործակցության փորձ ունի ինչպես Թուրքիայի, այնպես էլ Ադրբեջանի հետ, առաջին հերթին՝ առևտրատնտեսական, ինչպես նաև էներգետիկ ոլորտներում: Ադրբեջանը, շնորհիվ զարգացած տրանսպորտային ենթակառուցվածքների, հավակնում է դառնալ Հնդկաստանի մասնակցությամբ գլխավոր տարածաշրջանային նախագծի՝ Հյուսիս-Հարավ ծրագրի առանցքային մասնակիցը Հարավային Կովկասում:

---

by Akhil Kadidal & Akshara Parakala, 13 October 2022, https://www.janes.com/defence-news/news-detail/pakistan-integrating-tb2-into-air-defence-network (այցելվել է 15.03.2023թ.):

[25] "Pakistan eyes drones & deeper ties with Turkey, concerns in Delhi of possible triad with China", Snehesh Alex Philip, 7 July, 2021, https://theprint.in/diplomacy/pakistan-eyes-drones-deeper-ties-with-turkey-concerns-in-delhi-of-possible-triad-with-china/690986/ (այցելվել է 15.03.2023թ.):

[26] "Big disclosure: Pakistani army fighting on behalf of Azerbaijan in the war against Armenia", DNA webdesk |Updated: Sep 30, 2020, https://www.dnaindia.com/world/report-big-disclosure-pakistani-army-fighting-on-behalf-of-azerbaijan-in-the-war-against-armenia-zee-news-reports-2846325 (այցելվել է 15.03.2023թ.), "Pakistan armed forces throw weight behind Azerbaijan", Islamuddin Sajid, 10.10.2020, https://www.aa.com.tr/en/asia-pacific/pakistan-armed-forces-throw-weight-behind-azerbaijan/2001887 (այցելվել է 15.03.2023թ.):

Ընդհանուր առմամբ Հարավային Կովկասի վերաբերյալ Հնդկաստանը չունի ընդհանուր մշակված քաղաքականություն, ինչպես, օրինակ, «Հայացք դեպի Արևելք» կամ «Միավորել Կենտրոնական Ասիան» քաղաքական նախաձեռնությունները[27]: Վերջինս տարածաշրջանի երկրներից յուրաքանչյուրի նկատմամբ առանձին քաղաքական կուրս է իրականացնում, և հաճախ Նյու Դելիի գործողություններն ու նախաձեռնությունները մեր տարածաշրջանում ունենում են իրավիճակից բխող, մարտավարական բնույթ: Օրինակ, Հնդկաստանը ռեզիդենտ դեսպանություններ ունի Երևանում և Բաքվում, բայց մինչև օրս Վրաստանում չունի դեսպանություն և վերջինիս քաղաքացիներին սպասարկում է հյուպատոսության միջոցով, որը գործում է Երևանում Հնդկաստանի դեսպանության ենթակայության ներքո[28]: Ադրբեջանի պարագայում դեսպանության առկայությունը պայմանավորված է հիմնականում էներգետիկ շահերով, Հայաստանի պարագայում՝ քաղաքական առաջնահերթություններով:

Եթե դիտարկենք Մեծ Կովկասի (ավելի լայն տարածաշրջանի՝ ներառյալ Թուրքիան, Իրանը և Ռուսաստանը) երկրների հետ Հնդկաստանի առևտրատնտեսական հարաբերությունների հիմնական ցուցանիշները, ապա մի կողմից՝ կնկատենք, որ Հնդկաստանի մասնաբաժինը այս երկրների արտաքին առևտրի կառուցվածքում անհամեմատ ավելի համեստ է Չինաստանի հետ առևտրի ցուցանիշներից, մյուս կողմից՝ այն բաշխված է խիստ անհամաչափ և չի արտացոլում տարածաշրջանի երկրների հետ Հնդկաստանի քաղաքական հարաբերությունների իրական պատկերը:

[27] "India and the South Caucasus", Amb Achal Malhotra, November 30, 2022, https://www.vifindia.org/article/2022/november/30/india-and-the-south-caucasus (այցելվել է 15.03.2023թ.):

[28] "India's Growing Engagement with the South Caucasus", Emil Avdaliani, Caucasus Watch, 16 Mar 2020, https://caucasuswatch.de/news/2504.html?fbclid=IwAR1si-pBzYCwXcfqvT7O0AUnwyAdeWIJsEOyd6tI_VIRNI5ET4UocJ3UhdU (այցելվել է 15.03.2023թ.):



29

Օրինակ, ըստ Հնդկաստանի առևտրի և արդյունաբերության նախարարության հրապարակած տվյալների՝ 2021-ին (2021թ. ապրիլ - 2022թ. մարտ) տարածաշրջանի երկրների հետ (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան + Թուրքիա, Իրան, ՌԴ) Հնդկաստանի առևտուրը կազմել է ընդամենը շուրջ 26,4 մլրդ դոլար կամ վերջինիս առևտրի ընդամենը 2,5%-ը: Հարավային Կովկասի 3 պետությունների հետ Հնդկաստանի առևտուրը առավել չնչին է եղել՝ վերջինիս առևտրի շուրջ 0,06%-ը կամ շուրջ 660 մլն դոլար: Սա այն դեպքում, երբ Հնդկաստանը հանդիսանում է աշխարհի խոշորագույն տնտեսություններից մեկը: Այսինքն՝ Հնդկաստանը ունի մեծ պոտենցիալ՝ զարգացնելու առևտրատնտեսական հարաբերությունները ինչպես Հարավային Կովկասի

[29] Government of India, Ministry of Commerce and Industry, Department of Commerce, https://tradestat.commerce.gov.in/eidb/default.asp (այցելվել է 15.03.2023թ.):

երկրների, այնպես էլ Հայաստանը շրջապատող ընդհանուր մեծ տարածաշրջանի հետ:

Երկիրը	Հնդկաստանի արտաքին առևտրի շրջանառությունը Կովկասյան տարածաշրջանի երկրների հետ 2021-2022 (ապրիլ-մարտ) մլն ԱՄՆ դոլար			
	Արտահանումը դեպի	Ներմուծումը	Ընդամենը	Մասնաբաժինը
Հայաստան	27	135	162	0.015%
Ռուսաստան	3,254	9,870	13,124	1.27%
Իրան	1,451	463	1,914	0.18%
Թուրքիա	8,716	1,996	10,712	1%
Ադրբեջան	36	105	141	0.014%
Վրաստան	164	197	361	0.035%
Միասին	13,648	12,766	26,414	2.514%
Հնդկաստանի ընդհանուր արտաքին առևտրա-շրջանառու-թյունը	422,004	613,052	1,035,056	100%

Government of India, Ministry of Commerce and Industry, Department of Commerce[30]

Արդեն 2022թ. ապրիլ-դեկտեմբեր ամիսների տվյալներով, Հնդկաստանի առևտուրը տարածաշրջանի երկրների հետ կրկնապատկվել է՝ կազմելով վերջինիս արտաքին առևտրի շրջանառության շուրջ 5,5%-ը կամ շուրջ 48,4 մլրդ դոլար: Ընդ որում, Հնդկաստանի առևտուրը շեշտակիորեն ավելացել է Ադրբեջանի և ՌԴ-ի հետ՝ ի հաշիվ նավթի մեծաքանակ ներմուծման, մինչդեռ մյուս երկրների հետ հիմնականում պահպանվել է նախորդ տարիների դինամիկան: Մասնավորապես, ՌԴ-ի հետ Հնդկաստանի առևտուրը 2022թ. ապրիլ-դեկտեմբերին կազմել է շուրջ 35 մլրդ դոլար, ինչը գրեթե 3 անգամ գերազանցում է նախորդ տարվա (2021-2022 ապրիլ-մարտ) ցուցանիշը: Ցավոք, ինչպես մեծ տարածաշրջանի, այնպես էլ Հարավային Կովկասի երկրների շարքում Հնդկաստանի հետ առևտրի՝ Հայաստանի մասնաբաժինը չնչին է, ինչը չի համապատասխանում երկու երկրների միջև քաղաքական հարաբերությունների ներկայիս մակարդակին:

[30] Government of India, Ministry of Commerce and Industry, Department of Commerce, https://tradestat.commerce.gov.in/eidb/default.asp (այցելվել է 15.03.2023թ.):

2. ՀԱՅ-ՀՆԴԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հայ-հնդկական հարաբերությունները հիմնված են պատմական կապերի և դարավոր ավանդույթների վրա, ինչը Հայաստանի անկախացումից ի վեր նպաստավոր պայմաններ է ստեղծել երկկողմ հարաբերությունների զարգացման համար: Շատ չխորանալով հեռավոր պատմական կապերի մեջ՝ միայն նշենք, որ ուշ միջնադարում Հնդկաստանը եղել է հայկական քաղաքական մտքի զարգացման առանցքային կենտրոնը: Դեռ խորհրդային տարիներին՝ 1976-ին Հնդկաստանի վարչապետ Ինդիրա Գանդին այցելել է Հայաստան, մինչ այդ՝ 1964-ին Հայաստան էր այցելել նաև Հնդկաստանի նախագահը[31]:

Հնդկաստանը առաջիններից է ճանաչել ՀՀ անկախությունը, իսկ երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են արդեն 1992թ. օգոստոսի 31-ին[32]: Հայաստանի անկախացումից ի վեր երկկողմ շփումները պարբերական բնույթ են կրում, միաժամանակ շատ կարևոր է, որ դրանք չեն սահմանափակվում միայն կառավարությունների մակարդակով, այլ ընդգրկում են նաև երկու երկրների քաղաքացիների միջև միջանձնային շփումները (հիմնականում՝ շնորհիվ Հայաստանում սովորող մեծաթիվ հնդիկ ուսանողների):

ՀՀ առաջին, երկրորդ և երրորդ նախագահները պաշտոնական այցեր են կատարել Հնդկաստան՝ համապատասխանաբար 1995, 2003 և 2017 թվականներին: Հնդկաստանից Հայաստան ամենաբարձրաստիճան այցը եղել է երկրի փոխնախագահի, խորհրդարանի վերին պալատի խոսնակի մակարդակով՝ 2005 և 2017 թվականներին, բացի այդ, 2021-ին Հայաստան է այցելել նաև Հնդկաստանի արտգործնախարարը: Ուշագրավ է, որ Հնդկաստանի՝ նման բարձր մակարդակի պաշտոնական այցերը հիմնականում եղել են դեպի Հայաստան՝ շրջանցելով Հարավային Կովկասի մյուս երկրները[33], ինչը վկայում է Հայաստանի նկատմամբ Նյու Դելիի առանձնահատուկ ուշադրության և հետաքրքրության մասին: Երկու երկրների հարաբերությունների հիմքում դրված է ՀՀ և

[31] "Prospects for Future Armenian-Indian Security Cooperation", Yeghia Tashjian, November 8, 2020, https://armenianweekly.com/2020/11/08/prospects-for-future-armenian-indian-security-cooperation/ (այցելվել է 15.03.2023թ.):
[32] ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայք, երկկողմ հարաբերություններ, Հնդկաստան https://www.mfa.am/hy/bilateral-relations/in (այցելվել է 15.03.2023թ.):
[33] "India and the South Caucasus", Amb Achal Malhotra, November 30, 2022, https://www.vifindia.org/article/2022/november/30/india-and-the-south-caucasus (այցելվել է 15.03.2023թ.):

Հնդկաստանի միջև բարեկամության և համագործակցության վերաբերյալ 1995թ. դեկտեմբերի 14-ի համաձայնագիրը[34]:

Հնդկաստանը մշտապես հավասարակշռված դիրքորոշում է ունեցել Արցախյան հիմնախնդրի հարցում, ու թեև Պակիստանի հետ տարածքային հակամարտության բերումով մշտապես հանդես է գալիս տարածքային ամբողջականության սկզբունքի պաշտպանությամբ, սակայն երբևէ աչքի չի ընկել Արցախյան հարցում հակահայկական հայտարարություններով: Հայաստանն իր հերթին պաշտպանում է Հնդկաստանի դիրքորոշումը Ջամուի և Քաշմիրի հարցում և հանդես է գալիս վերջինիս տարածքային ամբողջականության պաշտպանության օգտին: Երկու երկրների արտաքին քաղաքականության կառուցվածքում հիմնաքարային նշանակություն ունեցող այս հարցերի շուրջ հակասությունների բացակայությունը նպաստավոր հիմքեր է ստեղծել երկկողմ քաղաքական հարաբերությունների զարգացման համար:

Հայ-հնդկական հարաբերություններում հատկապես զգալի դրական տեղաշարժ նկատվեց Ադրբեջան-Թուրքիա-Պակիստան համագործակցության խորացմանը զուգահեռ: Մասնավորապես երկկողմ շփումների ակտիվացում նկատվեց 2016-ի ապրիլյան պատերազմից հետո, երբ Պակիստանն իր անվերապահ աջակցությունը ցուցաբերեց Ադրբեջանին՝ Հայաստանին մեղադրելով «հրադադարի խախտման» մեջ[35]: Ավելի ուշ երկու երկրները պայմանավորվածություններ ձեռք բերեցին սպառազինությունների մատակարարման, համատեղ զորավարժությունների անցկացման հարցերում:

[34] ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայք, երկկողմ հարաբերություններ, Հնդկաստան https://www.mfa.am/hy/bilateral-relations/in (այցելվել է 15.03.2023թ.):
[35] "Armenia Finally Counters Pakistan's Anti-Armenian Policies", Harut Sassounian, November 29, 2016, https://armenianweekly.com/2016/11/29/armenia-pakistan/ (այցելվել է 15.03.2023թ.):

[36]

Միաժամանակ, 2017-ի ապրիլին նախ Հայաստան այցելեց Հնդկաստանի փոխնախագահ Մոհամմադ Համիդ Անսարին, ով այցի ընթացքում եղավ նաև Ծիծեռնակաբերդում[37]: Արդեն 2017-ի նոյեմբերին աշխատանքային այցով Հնդկաստան մեկնեց ՀՀ երրորդ նախագահը, ով հանդիպումներ ունեցավ Հնդկաստանի վարչապետի, նախագահի, փոխնախագահի հետ[38]: 2017թ. նոյեմբերին Թուրքիայի, Պակիստանի և Ադրբեջանի արտգործնախարարները համատեղ հայտարարություն տարածեցին, որը ենթադրում էր կողմերի փոխադարձ աջակցությունը միմյանց՝ տարածքային ամբողջականության հարցում, ինչպես նաև համագործակցության զարգացում անվտանգության ոլորտում:

2018-ին Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխությունից հետո, ինչպես արտաքին քաղաքական մի շարք այլ ուղղություններում, այնպես էլ հայ-հնդկական քաղաքական հարաբերություններում նկատվեց որոշակի անորոշություն և պասիվություն, եթե հաշվի չառնենք երկու երկրների վարչապետների կարճատև

[36] Նախագահ Սերժ Սարգսյանի աշխատանքային այցը Հնդկաստանի Հանրապետություն, ՀՀ նախագահի պաշտոնական կայք, 03.11.2017, https://www.president.am/hy/foreign-visits/item/2017/11/03/President-Serzh-Sargsyan-working-visit-to-India/ (այցելվել է 15.03.2023թ.):
[37] Հնդկաստանի փոխնախագահ Մոհամմադ Համիդ Անսարին երկօրյա պաշտոնական այցով ժամանել է Հայաստան, Հնդկաստանում ՀՀ դեսպանություն, 26 ապրիլի, 2017թ. https://india.mfa.am/hy/news/2017/04/26/MHA17/4683 (այցելվել է 15.03.2023թ.):
[38] Նախագահ Սերժ Սարգսյանի աշխատանքային այցը Հնդկաստանի Հանրապետություն, ՀՀ նախագահի պաշտոնական կայք, 03.11.2017, https://www.president.am/hy/foreign-visits/item/2017/11/03/President-Serzh-Sargsyan-working-visit-to-India/ (այցելվել է 15.03.2023թ.):

հանդիպումը 2019-ի սեպտեմբերին՝ ՄԱԿ-ի ԳԱ նստաշրջանի շրջանակներում: Սակայն հատկանշական է, որ դեռ 44-օրյա պատերազմից առաջ երկու երկրների միջև տեղի ունեցավ առաջին խոշոր գործարքը սպառազինության ոլորտում: Մասնավորապես, դեռ 2018-ի մարտին Հնդկաստանի ՊՆ պատվիրակությունը մասնակցեց Հայաստանում անցկացված «ԱրմՀայԹեք-2018» 2-րդ միջազգային ցուցահանդեսին[39], իսկ արդեն օգոստոսին տեղեկություն տարածվեց, որ Հայաստանը հետաքրքրություն է ցուցաբերում Հնդկաստանից սպառազինություն ձեռք բերելու հարցում[40]: 2020-ին Հայաստանը շուրջ 40 մլն ԱՄՆ դոլարով Հնդկաստանից ձեռք բերեց SWATHI հակամարտկոցային ռադարներ, որոնք ըստ տեխնիկական բնութագրի, հնարավորություն են տալիս 75 կմ հեռավորության վրա հայտնաբերել հակառակորդի հրետանու կրակային դիրքերը[41]:

Արցախյան 44-օրյա պատերազմից հետո Հայաստանի նկատմամբ Նյու Դելիի հետաքրքրությունը շատ ավելի նկատելի դարձավ՝ հաշվի առնելով պատերազմի ընթացքում Պակիստանի ակնհայտ ադրբեջանամետ դիրքորոշումը, ներգրավվածությունն ու գործողությունները: Ինչպես արդեն նշվեց, 2021-ի գարնանը տեղի ունեցավ Հնդկաստանի արտգործնախարարի առաջին այցը Հայաստան: Արդեն 2021-ի աշնանը Պակիստանը, Թուրքիան և Ադրբեջանը առաջին անգամ անցկացրին այսպես կոչված «Երեք եղբայրներ-2021» համատեղ զորավարժությունները[42], ինչին հետևեց հայ-հնդկական շփումների առավել

[39] Հնդկաստանի ՊՆ պատվիրակությունը մասնակցում է «ԱրմՀայԹեք-2018» ցուցահանդեսին, Հնդկաստանում ՀՀ դեսպանություն, 28 մարտի, 2018, https://india.mfa.am/hy/news/2018/03/28/Kumaran18/5744 (այցելվել է 15.03.2023թ.):
[40] "Armenia Explores Arms Deals With India", Sargis Harutyunyan, RFE/RL, 30.08.2018, https://www.azatutyun.am/a/29461817.html (այցելվել է 15.03.2023թ.):
[41] "India Wins Defense Deal with Armenia", By Fuad Shahbazov, the CACI Analyst, June 1, 2020, https://www.cacianalyst.org/publications/analytical-articles/item/13620-india-wins-defense-deal-with-armenia.html (այցելվել է 15.03.2023թ.):
[42] "Show of Strength from Turkey-Azerbaijan-Pakistan: Three Brothers-2021 Exercise", Özge ELETEK, 29/09/2021, https://www.ankasam.org/show-of-strength-from-turkey-azerbaijan-pakistan-three-

ակտիվացումը: 2022-2023թթ. ՀՀ արտգործնախարարը երկու անգամ այցելել է Հնդկաստան, մեկական անգամ Հնդկաստան են մեկնել ՀՀ պաշտպանության նախարարը, ԳՇ պետն ու Անվտանգության խորհրդի քարտուղարը[43]: 2022-ի սեպտեմբերին ՀՀ ինքնիշխան տարածքի նկատմամբ Ադրբեջանի հերթական ագրեսիայից հետո Հնդկաստանը այն փոքրաթիվ երկրներից էր, որ հանդես եկավ հասցեական հայտարարությամբ՝ անուղղակիորեն Ադրբեջանին բնութագրելով որպես ագրեսոր: Հնդկաստանը բավական հավասարակշռված դիրքորոշում արտահայտեց նաև Ադրբեջանական ագրեսիայի թեմայով ՄԱԿ-ի ԱԽ նիստի ժամանակ[44]:

Քաղաքական շփումների ակտիվացմանը զուգահեռ, Նյու Դելին և Երևանը ակտիվացրել են համագործակցությունը նաև ռազմատեխնիկական ոլորտում: Դեռևս 2003-ին ՀՀ և Հնդկաստանի միջև ստորագրվել է «ՀՀ և Հնդկաստանի պաշտպանության նախարարությունների միջև պաշտպանության բնագավառում համագործակցության մասին» հուշագիրը[45]: 2022-ի սեպտեմբերին ՀՀ նկատմամբ Ադրբեջանի հերթական ռազմական ագրեսիայից հետո հնդկական առաջատար լրատվամիջոցները մի շարք հոդվածներ հրապարակեցին առ այն, որ Երևանը պատրաստվում է ձեռք բերել մի քանի հարյուր միլիոն դոլարի սպառազինություն, ներառյալ՝ հրթիռներ և անօդաչու թռչող սարքեր[46]: Զուգահեռաբար հնդկական

---

brothers-2021-exercisev/?lang=en (այցելվել է 15.03.2023թ.), "Turkey, Azerbaijan, Pakistan launch joint military drills in Baku", by DAILY SABAH WITH AA, ISTANBUL, Sep 12, 2021 https://www.dailysabah.com/politics/diplomacy/turkey-azerbaijan-pakistan-launch-joint-military-drills-in-baku (այցելվել է 15.03.2023թ.):

[43] ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայք, երկկողմ հարաբերություններ, Հնդկաստան https://www.mfa.am/hy/bilateral-relations/in (այցելվել է 15.03.2023թ.), Աշխատանքային այցով Հնդկաստանում էր ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի գլխավորած պատվիրակությունը, ՀՀ պաշտպանության նախարարություն, 6 մարտի 2023, https://www.mil.am/hy/news/11352 (այցելվել է 15.03.2023թ.):

[44] "Armenia-Azerbaijan hostilities: why India has done well to call out the aggressor", Aditi Bhaduri, Published: September 23, 2022, https://www.indianarrative.com/opinion-news/armenia-azerbaijan-hostilities-why-india-has-done-well-to-call-out-the-aggressor-52802.html (այցելվել է 15.03.2023թ.):

[45] ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայք, երկկողմ հարաբերություններ, Հնդկաստան https://www.mfa.am/hy/bilateral-relations/in (այցելվել է 15.03.2023թ.):

[46] "First Pinaka export: Private companies to lead from front", By Manu Pubby, ET Bureau, Last Updated: Sep 29, 2022, https://economictimes.indiatimes.com/news/defence/first-pinaka-export-private-companies-to-lead-from-front/articleshow/94542885.cms (այցելվել է 15.03.2023թ.), "Arming Armenia: India to export missiles, rockets and ammunition", By Manu Pubby, ET Bureau, Last Updated: Oct 06, 2022, https://economictimes.indiatimes.com/news/defence/arming-armenia-india-to-export-missiles-rockets-and-ammunition/articleshow/94518414.cms (այցելվել է 15.03.2023թ.), "After Pinaka, another Indian Artillery System to be exported", By Manu Pubby, ET Bureau, Last Updated: Nov 10, 2022, https://economictimes.indiatimes.com/news/defence/after-pinaka-another-indian-artillery-system-to-be-exported/articleshow/95411190.cms (այցելվել է 15.03.2023թ.), "Indian weapons in Armenia irk Azerbaijan", Rakshit Sharma, January 13, 2023 https://www.firstpost.com/world/indian-weapons-in-armenia-irk-azerbaijan-11979652.html (այցելվել է 15.03.2023թ.):

մամուլում սկսեցին ակտիվորեն շրջանառվել տարբեր վերլուծություններ Թուրքիա-Պակիստան-Ադրբեջան ռազմական «դաշինքից» բխող սպառնալիքների և դրան դիմակայելու նպատակով Հայաստանի հետ ռազմատեխնիկական համագործակցության խորացման անհրաժեշտության մասին[47]: Թեև ո՛չ հայկական, ո՛չ էլ հնդկական կողմը այս գործարքի մասին պաշտոնական մանրամասներ այդպես էլ չներկայացրին, սակայն նաև նրանց կողմից չհերքվեց համագործակցության փաստը:

Չնայած Երևանի և Դելիի միջև սպառազինությունների ոլորտում համագործակցության մասին մանրամասների բացակայությանը՝ պետք է նշել, որ այն իսկապես հեռանկարային է և լիովին տեղավորվում է տարածաշրջանում ստեղծված աշխարհաքաղաքական իրադրության, Հայաստանի և Հնդկաստանի արտաքին քաղաքական շահերի տրամաբանության շրջանակներում, որին անդրադարձանք վերլուծության առաջին գլխում: Ուկրաինայում ռազմական գործողությունների և սպառազինության հարցում Ռուսաստանի աճող կարիքների համատեքստում Հայաստանի համար զգալիորեն սահմանափակվել է ավանդական դաշնակցից անհրաժեշտ որակի և քանակի սպառազինություն ձեռք բերելու հնարավորությունները: Միաժամանակ, հաշվի առնելով Հայաստանի անդամակցությունը ՀԱՊԿ-ին, Ռուսաստանի նկատմամբ դաշնակցային պարտավորությունները և տարածաշրջանում ու աշխարհում առկա ռազմաքաղաքական մթնոլորտը, Հայաստանի համար գրեթե անիրատեսական է անհրաժեշտ սպառազինությունների ձեռքբերումը արևմտյան երկրներից:

Տարբեր, հիմնականում աշխարհաքաղաքական պատճառներով, Հայաստանի ներկայիս իշխանությունները ամբողջությամբ չեն օգտագործում ոլորտում այլ խոշոր դերակատարների, օրինակ՝ Չինաստանի, Իրանի հետ համագործակցության իրական ներուժը: Այս առումով Հնդկաստանն այն երկիրն է, որ մի կողմից՝ ունակ է բավարարել սպառազինության ոլորտում ՀՀ ԶՈՒ կարիքների որոշակի հատվածը, մյուս կողմից՝ այս հարցում ունի օբյեկտիվ շահագրգռվածություն:

Ավելին, Հնդկաստանի հետ սպառազինության ոլորտում համագործակցության խորացումը չի հակասում ո՛չ ՀՀ անվտանգային շահերին, հաշվի առնելով, որ դա ավանդական դաշնակիցների՝ Ռուսաստանի և Իրանի կողմից չի կարող ընկալվել որպես սպառնալիք, քանի որ վերջիններս իրենք են

[47] "Analysis: India can't ignore dangerous adventures of '3 Brothers' in Armenia and elsewhere", By Pranab Dhal Samanta, ET Bureau, Last Updated: Oct 06, 2022 https://economictimes.indiatimes.com/news/defence/view-india-cant-ignore-dangerous-adventures-of-3-brothers-in-armenia-and-elsewhere/articleshow/94518499.cms (այցելվել է 15.03.2023թ.):

ակտիվորեն համագործակցում Հնդկաստանի հետ այս ոլորտում, ո՛չ էլ ՀՀ գործող իշխանությունների տարօրինակ արտաքին քաղաքականությանը՝ ամեն կերպ սահմանափակել պայմանական «հակաարևմտյան» բևեռի երկրների հետ ռազմաքաղաքական շփումները:

Ի տարբերություն Իրանի, Ռուսաստանի կամ Չինաստանի՝ Հնդկաստանը Արևմուտքի կողմից չի ընկալվում որպես աշխարհաքաղաքական մրցակից, հետևաբար վերջինիս հետ ռազմաքաղաքական հարաբերությունների խորացումը չի կարող Արևմուտքի կողմից ընկալվել որպես ՀՀ գործող իշխանությունների որդեգրած արևմտամետ աշխարհաքաղաքական կուրսից «շեղում»: Ռուսաստանը, հաշվի առնելով մի կողմից՝ Հայաստանին սպառազինությունների ոլորտում աջակցելու իր սահմանափակ հնարավորությունները, մյուս կողմից՝ Հարավային Կովկասում ռազմական հավասարակշռության խախտման արդյունքում ի հայտ եկող նորանոր անվտանգային ռիսկերը, կարող է իր հերթին շահագրգռվածություն ցուցաբերել տարածաշրջանում իր հիմնական դաշնակցի ռազմական ներուժի վերականգնման հարցում՝ այլընտրանքային այնպիսի աղբյուրներից, որոնք Մոսկվայի կողմից չեն ընկալվում որպես սպառնալիք: Ուշագրավ է, որ Հնդկաստանի կողմից 2021-ին նշանակված Հայաստանում ռազմական կցորի նստավայրը գտնվում է Մոսկվայում[48], ինչը կարևոր ուղերձ է պարունակում առ այն, որ ռազմական ոլորտում ՀՀ հետ համագործակցությունը Նյու Դելին չի դիտարկում Հայաստանում Մոսկվայի շահերի շրջանցման համատեքստում:

Միաժամանակ պետք չէ ակնկալել, որ Հնդկաստանի ռազմարդյունաբերությունը ներկայումս ի վիճակի է Հայաստանին ապահովել այնպիսի զինատեսակներով, որոնք կկարողանան կտրուկ փոփոխել ռազմական հավասարակշռությունը մեր տարածաշրջանում: Նախ՝ Հնդկաստանն ինքը սպառազինության խոշորագույն ներկրողներից է, իսկ արտադրողների շարքում ամենևին առաջատար դիրք չի զբաղեցնում: Հնդկաստանից սպառազինության ձեռքբերման հիմնական գործընկերներն են Մյանմարը, Շրի Լանկան, ինչը ամենևին չի վկայում հնդկական զենքի նկատմամբ միջազգային մեծ հետաքրքրության մասին: Բացի այդ, ինչպես արդեն նշվեց, Հնդկաստանի ռազմարդյունաբերության հիմքում ընկած է խորհրդային կամ ռուսական սպառազինությունը:

Այսինքն՝ մեծ հաշվով Հնդկաստանից ձեռք բերվող սպառազինությունը որակապես չի կարող փոխել ՀՀ ԶՈՒ սպառազինության կառուցվածքը, քանի որ

[48] Արշակ Կարապետյանը Հնդկաստանի դեսպանի հետ քննարկել է պաշտպանության ոլորտում համագործակցության հարցերը, 12.11.2021, https://news.am/arm/news/672161.html (այցելվել է 15.03.2023թ.):

մեծամասամբ հիմնված է հենց այն տեխնոլոգիաների վրա, որոնք ընկած են մինչև այդ Ռուսաստանից ձեռք բերված սպառազինության հիմքում: Մյուս կողմից, սա ունի նաև որոշ առավելություններ, քանի որ ավելի է հեշտացնում Հնդկաստանից ձեռք բերվող նոր սպառազինությունների համադրումը ՀՀ ԶՈՒ-ում առկա ռուսական կամ խորհրդային այլ համակարգերի հետ: Ավելին, հաշվի առնելով խորհրդային կամ ռուսական զինատեսակների արդիականացման հարցում Հնդկաստանի նշանակալի փորձն ու հաջողությունները, այս համագործակցությունը որոշակի հնարավորություններ է ստեղծում նաև ՀՀ ԶՈՒ-ում արդեն իսկ առկա սպառազինությունների արդիականացման ոլորտում:

Վերջին տարիներին Հնդկաստանը սպառազինության ոլորտում համագործակցության արդյունավետ ուղիներ է ստեղծել ինչպես որոշ արևմտյան երկրների՝ ԱՄՆ, Ֆրանսիա և այլն, այնպես էլ Իսրայելի հետ: Այս տեսանկյունից Հնդկաստանի հետ համագործակցությունը կարող է հեռանկարային լինել ինչպես ժամանակակից ԱԹՍ-ների ձեռքբերման[49], այնպես էլ Ադրբեջանի և Թուրքիայի զինանոցում գերակշռող իսրայելական կամ արևմտյան տեխնոլոգիաների հիմքով կառուցված ԱԹՍ-ների դեմ պայքարի հարցում:

Ավելին, Հնդկաստանը ռազմարդյունաբերության ոլորտի զարգացման և սպառազինությունների խոշոր արտահանող դառնալու բավական լուրջ հավակնություններ ունի: Դեռ 2020-ին Հնդկաստանի կառավարությունը թիրախավորել է սպառազինության արտահանումը մինչև 2025 թվականը հասցնել տարեկան 5 մլրդ դոլարի, իսկ ներքին արտադրությունը՝ 25 մլրդ դոլարի: 2021-ին 2017-ի համեմատ Հնդկաստանից սպառազինության արտահանումը աճել է 7 անգամ՝ 200 մլն-ից հասնելով 1,5 մլրդ դոլարի, իսկ ընդհանուր առմամբ 2020-ին Հնդկաստանը արտադրել է շուրջ 11 մլրդ դոլար արժողությամբ սպառազինություն[50]: Հաշվի առնելով, որ Հայաստանը գտնվում է Ադրբեջանի հետ շարունակվող հակամարտության մեջ, իսկ սահմանային բախումները պարբերական բնույթ են կրում, այդ թվում՝ խոշոր տրամաչափի զինատեսակների կիրառմամբ, կարելի է ենթադրել, որ Հայաստանի կողմից հնդկական զենքի արդյունավետ կիրառումը զգալիորեն կմեծացնի վերջինիս նկատմամբ միջազգային պահանջարկը:

[49] "India will soon get a combat drone/ HAL will produce the first five Tapas-BH-201 drones", By Pradip R Sagar, May 01, 2022 https://www.theweek.in/theweek/cover/2022/04/22/india-will-soon-get-a-combat-drone.html (այցելվել է 15.03.2023թ.):
[50] "India as an emerging weapons exporter", Ajay Banerjee, Apr 05, 2022, https://www.tribuneindia.com/news/features/india-as-an-emerging-weapons-exporter-383067 (այցելվել է 15.03.2023թ.):

Միաժամանակ, ռազմական ոլորտում Հնդկաստանի հետ համագործակցության հնարավորությունները չեն սահմանափակվում միայն սպառազինության մատակարարմամբ: Հնդկաստանը ունի իրական ներուժ ՀՀ ԶՈՒ սպայական անձնակազմի վերապատրաստման, ռազմական կրթության ոլորտում: Ինչպես Հայաստանն է հանդիսանում առողջապահության ոլորտում կարևոր ուսումնական հարթակ հարյուրավոր հնդիկ ուսանողների համար, այնպես էլ Հնդկաստանը կարող է Հայաստանի համար նման հարթակ դառնալ ռազմարվեստի ոլորտում՝ օրինակ, ժամանակակից ԱԹՍ-ների կիրառման, կառավարման ուղղությամբ:

Ինչպես արդեն նշվեց, Հնդկաստանը ունի որոշակի փորձ ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Իրանի հետ զորավարժությունների անցկացման հարցում: Ավելին, բոլորովին վերջերս ՀՀ ԶՈՒ-ն Հնդկաստանի ԶՈՒ-ի հետ համատեղ մասնակցել են 2022-ի սեպտեմբերին Ռուսաստանում անցկացված զորավարժություններին[51]: Ինչպես Հայաստան-Ռուսաստան-Իրան-Հնդկաստան բազմակողմ, այնպես էլ Հայաստան-Հնդկաստան երկկողմ զորավարժությունները լիովին բխում են նշված երկրների տարածաշրջանային շահերից և վերջիններիս դեմ կուտակված անվտանգային սպառնալիքներից: Այս առումով կարող է լրացուցիչ խթան հանդիսանալ Թուրքիա-Ադրբեջան-Պակիստան զորավարժությունների արդեն կայացած պրակտիկան, ինչպես նաև սպառազինության ոլորտում վերջիններիս համագործակցությունը[52], ինչը տարածաշրջանի բոլոր երկրները այս կամ այն չափով ընկալում են որպես սպառնալիք:

Հայ-հնդկական համագործակցության շրջանակներում զարգացման մեծ ներուժ ունեցող մյուս ուղղությունը Հյուսիս-Հարավ տրանսպորտային միջանցքն է: Արդեն նշվեց, որ այն հանդիսանում է մեր տարածաշրջանում Հնդկաստանի գլխավոր աշխարհաքաղաքական առաջնահերթությունը, որում շահագրգռված են նաև Հայաստանի ռազմավարական գործընկերներ Ռուսաստանն ու Իրանը: Թեև նախագծի հիմնական ճյուղը մեր տարածաշրջանում անցնում է Ադրբեջանի տարածքով և Կասպից ծովով, սակայն դա չի նշանակում, որ Հայաստանը ծրագրից լիովին դուրս է մնացել: Հաշվի առնելով Ադրբեջանի և Թուրքիայի խորացող համագործակցությունը Պակիստանի հետ, վերջիններիս ազդեցության

[51] "Vostok 2022: India's Participation in Military Exercises", Borah Rupakjyoti, September 8, 2022, https://russiancouncil.ru/en/analytics-and-comments/analytics/vostok-2022-india-s-participation-in-military-exercises/ (այցելվել է 15.03.2023թ.):

[52] "India Wins Defense Deal with Armenia", By Fuad Shahbazov, the CACI Analyst, June 1, 2020, https://www.cacianalyst.org/publications/analytical-articles/item/13620-india-wins-defense-deal-with-armenia.html (այցելվել է 15.03.2023թ.):

տարածումը Կենտրոնական Ասիայում, Հնդկաստանի, ինչպես նաև Իրանի ու Ռուսաստանի շահերից է բխում, որպեսզի այդ մեգանախագծի ցամաքային բաղադրիչը չհայտնվի Բաքվից և Անկարայից ամբողջական կախվածության մեջ:

Հյուսիս-Հարավ նախագծին լիարժեք մասնակցություն ունենալու համար շատ կարևոր է ՀՀ և Իրանի միջև տրանսպորտային ենթակառուցվածքների արագ զարգացումը, ինչպես նաև 44-օրյա պատերազմից հետո Սյունիքում ստեղծված լոգիստիկ խնդիրների արագ հաղթահարումը: Գաղտնիք չէ, որ Իրանը ակտիվորեն ընդդիմանում է այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքի» շուրջ թուրք-ադրբեջանական հավակնություններին, այդ թվում՝ վախենալով կորցնել Հյուսիս-Հարավ նախագծի միակ հուսալի և այլընտրանքային ուղղությունը, որն անցնում է ՀՀ տարածքով: Հաշվի առնելով տարածաշրջանում Հնդկաստանի աշխարհաքաղաքական շահերը՝ ՀՀ իշխանությունների կողմից գրագետ աշխատանքի դեպքում Հնդկաստանը նույնպես կարող է ակտիվացնել իր հակազդեցությունը ՀՀ ինքնիշխան տարածքի նկատմամբ թուրք-ադրբեջանական սպառնալիքներին՝ որոնք միտված են արգելափակելու Հյուսիս-Հարավ ծրագրի հայկական ճյուղը:

Եթե Թուրքիան ու Ադրբեջանը փորձում են այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքը» ամեն կերպ «խցկել» չինական «Գոտի և ճանապարհ» նախագծում, ապա Հնդկաստանի պարագայում այդ նախագիծը հետաքրքրություն չի ներկայացնում, իսկ ահա Հյուսիս-Հարավ ծրագրի ցանկացած այլընտրանքային բաղադրիչ մեծ կարևորություն ունի: Այս առումով ուշագրավ է դեռևս 2021-ին Իրանում Հնդկաստանի դեսպանի հայտարարությունն այն մասին, որ Հնդկաստանը պատրաստվում է Չաբահար նավահանգիստն ու Հնդկական օվկիանոսը Եվրասիայի ու Հելսինկիի հետ կապել հենց Հայաստանի տարածքով անցնող Հյուսիս-Հարավ միջանցքով[53]:

Հայաստանի անդամակցությունը ԵԱՏՄ-ին մեկ այլ կարևոր հանգամանք է, որը նպաստավոր պայմաններ է ստեղծում Հյուսիս-Հարավ նախագծի շրջանակներում Հայաստան-Հնդկաստան և Հայաստան-Իրան համագործակցության խորացման համար: Եթե Իրանը ԵԱՏՄ-ի հետ արդեն իսկ ունի ազատ առևտրի մասին համաձայնագիր, ապա Հնդկաստանը այս ուղղությամբ մեծ հետաքրքրություն է ցուցաբերում և ինտենսիվ բանակցություններ վարում: Ինչպես 2017-ին նախագահ Սարգսյանի այցի ժամանակ Հնդկաստանի վարչապետ Մոդին կարևորել էր հայ վաճառականների պատմական դերը՝

[53] "India plans to connect Indian Ocean with Eurasia via Armenia", Armenpress, 10 March 2021, https://armenpress.am/eng/news/1045658/ (այցելվել է 15.03.2023թ.):

Հնդկաստանի և այլ երկրների միջև առևտրի խթանման գործում[54], այնպես էլ այժմ Հայաստանը կարող է դառնալ կապող օղակ մի կողմից՝ Հնդկաստանի և ԵԱՏՄ-ի, մյուս կողմից՝ Հնդկաստանի և ԵՄ-ի միջև (Վրաստանի մասնակցությամբ):

Հայաստանն ու Հնդկաստանը ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ համագործակցության լուրջ ներուժ ունեն ահաբեկչության դեմ պայքարի ոլորտում: 44-օրյա պատերազմի ժամանակ Ադրբեջանի և Թուրքիայի կողմից, ենթադրաբար նաև Պակիստանի աջակցությամբ, ահաբեկչական խմբավորումների ներգրավումը լուրջ նախադեպ է, որը չի կարող չանհանգստացնել Նյու Դելիին, քանի որ նույնը կարող է տեղի ունենալ Պակիստանի հետ սահմանին: Հայաստանը կարող է նախաձեռնողականություն ցուցաբերել Հնդկաստանի մասնակցությամբ հակաահաբեկչական կենտրոնի ձևավորման հարցում: Ընդ որում, Երևանը դա կարող է խրախուսել, օրինակ՝ ՀԱՊԿ-Հնդկաստան, Երևան-Մոսկվա-Նյու Դելի, Երևան-Թեհրան-Նյու Դելի և այլ ձևաչափերով հակաահաբեկչական հարթակի ձևավորման առաջարկներով: Ավելին, ահաբեկչության դեմ պայքարը և Մերձավոր Արևելքից Կենտրոնական Ասիա միջազգային վարձկանների տեղաշարժի սահմանափակումը նույնպես շատ կարևոր գործոններ են, որոնք կարող են լրացուցիչ փաստարկ հանդիսանալ այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքի» հարցում Հնդկաստանից քաղաքական աջակցություն ստանալու համար:

Ինչպես նշվեց, Հնդկաստանը կարևոր դերակատարություն ունի մի շարք միջազգային կազմակերպություններում և հարթակներում, ինչպիսիք են ՄԱԿ-ը, Զմիացման շարժումը, Շանհայի համագործակցության կազմակերպությունը, ԲՐԻԿՍ-ը, G20-ը և այլն: Վերջինս, հանդիսանալով չմիավորման շարժման ոչ ֆորմալ առաջնորդը, որոշակի հեղինակություն է վայելում շարժման այլ անդամ երկրների շրջանում, ինչը շատ կարևոր է, եթե հաշվի առնենք, որ այդ շարժման մասնակից երկրների մի զգալի մասը վերջին տարիներին հայտնվել են Ադրբեջանական քարոզչության ազդեցության ներքո և պարբերաբար հայտարարությունների, քվեարկությունների միջոցով ցուցաբերում են խիստ ադրբեջանամետ վարքագիծ: Հաշվի առնելով տարբեր միջազգային ատյաններում Հայաստանի և Ադրբեջանի միջև ընթացող դատական գործընթացները, միջազգային կազմակերպություններում հայ-ադրբեջանական սահմանի և Արցախի հարցում քննարկումներն ու քվեարկությունները՝ վերոհիշյալ հանգամանքը առավել է կարևորվում:

[54] Նախագահ Սերժ Սարգսյանի աշխատանքային այցը Հնդկաստանի Հանրապետություն, ՀՀ նախագահի պաշտոնական կայք, 03.11.2017թ, https://www.president.am/hy/foreign-visits/item/2017/11/03/President-Serzh-Sargsyan-working-visit-to-India/ (այցելվել է 15.03.2023թ.):

Հնդկաստանի հետ արտաքին քաղաքական օրակարգերի առավել ներդաշնակեցումը, հաղորդակցության նոր ուղիների ձևավորումը շատ կարևոր է, որպեսզի տարբեր միջազգային հարթակներում հայկական դիրքորոշումը լսելի դառնա ևս մեկ գործընկերոջ միջոցով՝ հանձին Նյու Դելիի: Սա հատկապես կարևոր է, եթե հաշվի առնենք, որ 2023-ին Հնդկաստանը նախագահում է այնպիսի կարևոր միջազգային կառույցներում, ինչպիսիք են G20-ը և ՇՀԿ-ն[55]:

Ի վերջո, հայ-հնդկական հարաբերությունները զարգացման հսկայական ներուժ ունեն տնտեսության ոլորտում: Արդեն նշվեց, որ Հարավային Կովկասի երկրների հետ Հնդկաստանի տնտեսական կապերը չեն արտացոլում տարածաշրջանի նկատմամբ վերջինիս քաղաքական հետաքրքրությունը, ինչպես նաև Հյուսիս-Հարավ ծրագրի շրջանակներում Հնդկաստանի համար մեր տարածաշրջանի իրական ներուժը: Հաշվի առնելով, քաղաքական մակարդակում Հնդկաստանի հետ Հայաստանի առանձնաշնորհյալ հարաբերությունները՝ Հայաստանը կարող է դառնալ այդ պոտենցիալի իրացման ամենաարդյունավետ և հուսալի հարթակը՝ օգտվելով ինչպես իր անդամակցությունից ԵԱՏՄ-ին, այնպես էլ իր աշխարհագրական դիրքից ու Իրանի հետ ընդհանուր սահմանից, որը Հնդկաստանը դիտարկում է որպես կարևոր դարպաս Կենտրոնական Ասիայի և Եվրոպայի հետ կոմունիկացիաների զարգացման համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հնդկաստանը Հայաստանի արտաքին քաղաքական խոսույթում համեմատաբար նոր դերակատար է, և երկու երկրների միջև հարաբերությունների զարգացման իրական պոտենցիալը բացահայտված չէ ո՛չ փորձագիտական և ո՛չ էլ քաղաքական մակարդակում: Ակնհայտ է, որ Երևանի և Նյու Դելիի միջև բազմոլորտ փոխգործակցության խորացման իրական հնարավորություններն ու սահմանափակումները հասկանալու համար անհրաժեշտ են շատ ավելի խոր մասնագիտական վերլուծություններ և հետազոտություններ, փորձագիտական մակարդակի շփումներ, սակայն այն, որ այդպիսի ներուժ առկա է, պարզ է դառնում նույնիսկ այս՝ ոչ այնքան խոր և ծավալուն հետազոտության արդյունքում:

Բարեբախտաբար Հնդկաստանը նաև թերևս միակ ոչ արևմտյան աշխարհաքաղաքական կենտրոնն է, որի հետ հարաբերություններում ՀՀ գործող իշխանությունները դեռևս չեն հասցրել էական խնդիրներ և ճգնաժամեր ստեղծել:

---

[55] “Шанхайская организация сотрудничества и Индия”, Анурада Ченой, мнения экспертов, Международный дискуссионный клуба «Валдай» 27.12.2022, https://ru.valdaiclub.com/a/highlights/shankhayskaya-organizatsiya-sotrudnichestva/ (այցելվել է 15.03.2023թ.):

Սա թեև տարօրինակ, բայց ևս մեկ կարևոր գործոն է՝ ի նպաստ հայ-հնդկական հարաբերությունները ռազմավարական նոր մակարդակի բարձրացնելու ջանքերի:

Հարավային Կովկասում և ավելի մեծ տարածաշրջանում փոփոխվող աշխարհաքաղաքական իրադրության, Հայաստանի համար անվտանգային նոր սպառնալիքների առկայության պայմաններում Հնդկաստանը այն քիչ ուղղություններից մեկն է, որի հետ գրագետ աշխատանքը կարող է դույզն-ինչ մեղմել մեր դեմ կուտակված անվտանգային ռիսկերը: Այս իմաստով, հայ-հնդկական համագործակցությունը զարգացման մեծ պոտենցիալ ունի հետևյալ ոլորտներում.

Քաղաքական ոլորտ

Տարածաշրջանային և գլոբալ հարցերի մեծ մասի շուրջ Հայաստանի և Հնդկաստանի շահերի ու դիրքորոշումների համընկնումը քաղաքական ոլորտում երկկողմ հարաբերությունները ռազմավարական գործընկերության մակարդակի հասցնելու իրական ներուժ է պարունակում: Երևանն ու Նյու Դելին կարող են ակտիվացնել քաղաքական շփումների մակարդակը, հիմնական արտաքին քաղաքական առաջնահերթությունների շուրջ պարբերաբար երկխոսության նոր ուղիներ ձևավորել, ինչպես նաև ակտիվացնել միջխորհրդարանական կապերը:

Օրինակ, հետաքրքիր նախաձեռնություն կարող է լինել արտգործնախարարների, հնարավորության դեպքում՝ նույնիսկ վարչապետների մակարդակով համատեղ հայտարարության տարածումը (Պակիստան-Ադրբեջան-Թուրքիա համատեղ հայտարարությունների օրինակով), որտեղ Երևանն ու Դելին պաշտոնապես կներկայացնեն իրենց դիրքորոշումը այնպիսի կարևոր հարցերի շուրջ, ինչպիսիք են Արցախի հիմնախնդիրը, Ջամուի և Քաշմիրի հակամարտությունները, ՀՀ տարածքային ամբողջականության և ինքնիշխանության խնդիրը (Սյունիք, «Զանգեզուրի միջանցք») և այլն: Երկու երկրների միջև քաղաքական քննարկումների առարկա պետք է դառնա Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և այս հարցում Հնդկաստանի դիրքորոշման հստակեցման հարցը, և այս առումով միջխորհրդարանական շփումները կարող են էական նշանակություն ունենալ:

Միջազգային հարթակներ

Հնդկաստանը կարող է կարևոր դեր խաղալ ՇՀԿ-ին Հայաստանի անդամակցության հարցում: 2022-ին Հայաստանի վարչապետը չեղարկեց իր մասնակցությունը Սամարղանդի գագաթնաժողովին՝ դա հիմնավորելով սեպտեմբերին ադրբեջանական ագրեսիայով: 2023-ին կազմակերպության

նախագահությունն անցել է Հնդկաստանին և հաջորդ գագաթնաժողովը տեղի է ունենալու բարեկամական երկրում: Պատշաճ դիվանագիտական աշխատանքի պարագայում Հնդկաստանը կարող է Հայաստանի ղեկավարությանը հրավիրել գագաթնաժողովին: Այս կառույցում ապագայում ինչպես Հնդկաստանի, այնպես էլ Չինաստանի, Ռուսաստանի հետ հետագա համագործակցությունը շատ կարևոր է այնտեղ թուրք-ադրբեջանական խոսույթին հակազդելու և վերջիններիս ազդեցությունը զսպելու տեսանկյունից:

Բացի այդ, Հնդկաստանը այս տարի նախագահում է նաև G20-ը, ուստի այս հարթակում ևս իր խոսքը աշխարհի գերտերություններին հասցնելու մեծ ներուժ ունի: Ադրբեջանի շարունակվող ագրեսիայի, Արցախի շրջափակման և ՀՀ ինքնիշխան տարածքների օկուպացիայի պայմաններում շատ կարևոր է, որպեսզի ՀՀ իշխանությունները պատշաճ աշխատանք կատարեն բարեկամական երկրների կառավարությունների հետ՝ հայկական օրակարգը միջազգային տարբեր հարթակներում առաջ մղելու նպատակով: Ուշագրավ է, որ այս ուղղությամբ արդեն իսկ նկատվում են որոշակի քայլեր, մասնավորապես G20-ի արտգործնախարարների գագաթնաժողովին զուգահեռ անցկացվող «Ռաիսինա երկխոսություն» համաժողովի շրջանակներում Նյու Դելիի կողմից ՀՀ ԱԳ նախարարին Հնդկաստան հրավիրելու կարևոր դիվանագիտական քայլը[56]: Այլ հարց է, թե որքանով են ՀՀ իշխանությունները ի վիճակի օգտագործել նման հարթակները Հայաստանի և Արցախի կենսական շահերը պաշտպանելու նպատակով:

Հնդկաստանը կարող է կարևոր դերակատարում ունենալ, եթե Հայաստանը ցանկություն հայտնի անդամակցել Չմիացման շարժման կազմակերպությանը: Հաշվի առնելով մի կողմից՝ այդ կառույցում Ադրբեջանի հակահայկական վարքագիծը, ինչպես նաև դրան հակազդելու անհրաժեշտությունը, մյուս կողմից՝ շարժման նկատմամբ ՀՀ ռազմավարական դաշնակցի՝ ՌԴ-ի աճող հետաքրքրությունը, Հայաստանի անդամակցությունը այդ կառույցին եթե ոչ միջնաժամկետ, ապա երկարաժամկետ հեռանկարում կարող է շատ տրամաբանական լինել:

Այլ միջազգային կառույցներում, մասնավորապես՝ ՄԱԿ-ում Երևանն ու Նյու Դելին կարող են կատարելագործել իրենց համագործակցությունը: Օրինակ, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի, Անվտանգության խորհրդի նիստերից առաջ կողմերի ներկայացուցիչների կամ ԱԳ նախարարների միջև ընթացիկ արտաքին

[56] Հայաստանի և Հնդկաստանի ԱԳ նախարարների հանդիպումը, ՀՀ ԱԳՆ պաշտոնական կայք, 4 մարտի 2023թ. https://www.mfa.am/hy/press-releases/2023/03/04/Mirzoyan_Jaishankar/11905 (այցելվել է 15.03.2023թ.):

քաղաքական առաջնահերթությունների քննարկումն ու համաձայնեցումը կարող է այդ ուղղությամբ շատ կարևոր քայլ լինել: Զարգացման մեծ ներուժ ունի փոխգործակցությունը հայկական և հնդկական սփյուռքի և լոբբիստական կազմակերպությունների միջև:

Ռազմական ոլորտ

Հայաստանի և Հնդկաստանի միջև համագործակցությունը ռազմական ոլորտում համեմատաբար նոր, սակայն ամենից հեռանկարային ուղղություններից մեկն է: Այս իմաստով փոխգործակցության զարգացման մեծ ներուժ ունեն սպառազինությունների մատակարարման, հակաահաբեկչական պայքարի, համատեղ զորավարժությունների, ռազմական կրթության և վերապատրաստման, հեռանկարում նաև ռազմարդյունաբերության ոլորտում որոշ համատեղ ծրագրերի իրականացման ուղղությունները:

Օրինակ, Հնդկաստանը կարող է լուրջ ներդրում ունենալ Հայաստանում ժամանակակից ռազմական ԱԹՍ-ների արտադրության զարգացման հարցում, հատկապես եթե Հայաստանն այդ ուղղությամբ որոշակի համագործակցության ուղիներ ստեղծի Իրանի և Ռուսաստանի հետ: Հակաահաբեկչական պայքարի համատեղ կենտրոնի ստեղծումը ևս մեկ հեռանկարային ուղղություն է, որը զարգացման և տարածաշրջանի այլ երկրների ներգրավման մեծ ներուժ ունի: Ռազմաուսումնական ոլորտում փոխանակման և վերապատրաստման ծրագրերի իրականացումը մյուս կարևոր ուղղությունն է: Երկու երկրները կարող են նաև համագործակցել իրենց զինանոցում առկա խորհրդային կամ ռուսական զինատեսակների արդիականացման ուղղությամբ: Հնդկաստանի հետ երկկողմ և բազմակողմ զորավարժությունների անցկացումը կարող է զսպող գործոն դառնալ տարածաշրջանում Հայաստանի ագրեսիվ հակառակորդների համար:

Տարածաշրջանային համագործակցություն և տնտեսություն

Վերջապես Հայաստանը պետք է ամեն ինչ անի, որպեսզի դուրս չմնա տարածաշրջանում Հնդկաստանի հիմնական աշխարհաքաղաքական նախաձեռնությունից՝ Հյուսիս-Հարավ ծրագրից: Այն եզակի տարածաշրջանային ծրագրերից է, որին մասնակցելու և որից օգտվելու հնարավորությունը Հայաստանի Հանրապետությունը դեռ պահպանում է: Սակայն այս միջանցքի ընձեռած հնարավորություններից լիարժեք օգտվելու համար մեզ անհրաժեշտ են համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք առայժմ բացակայում են: Փոխարենը, տարածաշրջանի մյուս երկրները ակտիվորեն զարգացնում են իրենց տրանսպորտային ենթակառուցվածքները՝ դրանք հարմարեցնելով Հյուսիս-Հարավ միջանցքի պահանջներին: Եթե Երևանն այս հարցում հապաղի և

չկարողանա ճիշտ օգտվել ստեղծված հնարավորությունից, մեծ է հավանականությունը, որ Հայաստանը դուրս կմնա նաև այս ծրագրից, ինչը առավել կխորացնի երկրի տարածաշրջանային մեկուսացումը:

Հյուսիս-Հարավ ՄՏՄ-ի շահագործումը էականորեն կկրճատի ԵԱՏՄ-Հնդկաստան առևտրի տրանսպորտային ծախսերը: Հնդկաստանի հետ ազատ առևտրի պայմանագրի հնարավոր կնքումը կարող է ԵԱՏՄ-Հնդկաստան առևտրաշրջանառության համար լրացուցիչ խթան հանդիսանալ: Սա նշանակում է, որ Հնդկաստանը կարող է հետաքրքրված լինել նաև Հայաստանում ենթակառուցվածքների զարգացման գործում ներդրումներով: Ուշագրավ է, որ Հնդկաստանի համար ԵԱՏՄ-ի հետ համագործակցության առաջնային ոլորտներն են՝ էներգետիկան, դեղագործությունը, առողջապահությունը, ՏՏ ոլորտը, ծառայություններն ու ոսկերչությունը: Նշված գրեթե բոլոր ուղղություններով Հայաստանը կարող է Հնդկաստանի համար կարևոր գործընկեր դառնալ, իսկ տարածաշրջանում ԵԱՏՄ անդամ միակ պետություն լինելու հանգամանքը կարող է առավել մեծացնել Հնդկաստանի հետաքրքրությունը Հայաստանի նկատմամբ:

Անհրաժեշտ է որոշակի քայլեր ձեռնարկել, որոնք թույլ կտան Հնդկաստանի ուշադրությունը սևեռել Հայաստանում իրականացվող ենթակառուցվածքային ծրագրերի վրա: Հաշվի առնելով Իրանում ենթակառուցվածքների զարգացման նպատակով Հնդկաստանի կողմից իրականացվող ներդրումների ծավալը, կարող ենք ենթադրել, որ վերջինիս հետաքրքրությունը տարածաշրջանի նկատմամբ բավական մեծ է: Հյուսիս-Հարավ ՄՏՄ-ը Հնդկաստանի կողմից դիտարկվում է ոչ միայն տնտեսական, այլև աշխարհաքաղաքական տեսանկյունից, ուստի տարածաշրջանում ճիշտ քաղաքական դիրքավորումը Հայաստանին հնարավորություն կտա դառնալ Հարավային Կովկասում Հնդկաստանի հիմնական գործընկերները նաև Հյուսիս-Հարավ ծրագրի շրջանակներում:

Անհրաժեշտ է Իրանի, Ռուսաստանի և Հնդկաստանի հետ ինտենսիվ երկխոսություն սկսել հատկապես Սյունիքում ենթակառուցվածքների արագ ձևավորման համար ֆինանսական ռեսուրսների ներգրավման ուղղությամբ: Հայաստանն այսօր էլ հանդիսանում է Հնդկաստանի զարգացման աջակցության ծրագրի՝ տարածաշրջանում ամենախոշոր շահառուն և այս ուղղությամբ համագործակցությունը մեծ պոտենցիալ ունի[57]: Մասնավորապես, Նյու Դելին մի շարք բարեգործական ծրագրեր է իրականացրել Հայաստանի մարզերում: Այս բոլոր ուղղություններով երկկողմ հարաբերությունները որակական նոր

[57] "India and the South Caucasus", Amb Achal Malhotra, November 30 , 2022 https://www.vifindia.org/article/2022/november/30/india-and-the-south-caucasus (այցելվել է 15.03.2023թ.):

մակարդակի հասցնելու լուրջ հնարավորություն կա, որի համար անհրաժեշտ է միայն քաղաքական կամք և գրագետ մոտեցում:

Միաժամանակ, պետք է նորից ընդգծել, որ Հնդկաստանի հետ համագործակցության խորացումը տարբեր ոլորտներում ամենևին չի նշանակում, որ Հայաստանը դա կարող է իրականացնել ի հաշիվ կամ ի հեճուկս տարածաշրջանի այլ դերակատարների՝ հատկապես ավանդական գործընկերների և դաշնակիցների շահերի: Հատկապես քաղաքական և ռազմական ոլորտում Հնդկաստանի հետ համագործակցությունը չպետք է որևէ կերպ ուղղված լինի Ռուսաստանի և Իրանի կենսական շահերի դեմ, իսկ արտաքին քաղաքական նախաձեռնություններն ու փոխգործակցությունը պետք է ունենա հստակ կարմիր գիծ, այն է՝ չհակադրվել մեկ այլ աշխարհաքաղաքական բևեռի՝ Չինաստանի կենսական շահերին և որևէ կերպ չվնասել Պեկինի հետ բարեկամական և ոչ պակաս մեծ ներուժ ունեցող հարաբերությունները:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*